The presented analysis demonstrates that the transition from the reactive “request–response” paradigm toward predictive, proactive interaction is achievable, provided that the system possesses a multidimensional, continuously updated digital persona of the user. Since traditional static models do not adapt to the rapid changes of the digital domain, a transition to multilayered behavioral modeling is proposed in order to enhance the accuracy of predictions. This approach holds applied significance in the fields of education, healthcare, information services, and personalized systems.

Future research will focus on the development of a system based on the proposed model and its applied validation using multi-domain data.

Ներկայացվել է 01. 04. 2026 թ.
Գրախոսվել է 01. 25. 2026 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՄԵԹՈԴԻԿԱ

ПЕДАГОГИКА И
МЕТОДИКА

PEDAGOGY AND
METHODOLOGY

«Արհեստական բանականության կիրառություններ» թեմայի ուսուցումը նախագծային մեթոդի կիրառմամբ

Ասրյան Գայանե

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-94>

Հանգուցային բառեր. նախագծային ուսուցում, քննադատական մտածողություն, ինտերակտիվ խաղ, անվտանգության ուղեցույց, էթիկական որոշումներ, սովորողի ինքնավարություն, մենթորություն

Նախաբան

Ժամանակակից կրթությունը հայտնվել է տեխնոլոգիական հեղափոխության ազդեցության ներքո, որտեղ թվային գործիքները և արհեստական բանականությունը (ԱԲ) ավելի հաճախ են ներթափանցում սովորողների առօրյա կյանք: Սովորողները օգտվում են տարբեր ԱԲ ծառայություններից՝ տեղեկատվություն որոնելու, ստեղծագործական խնդիրներ լուծելու և ինքնուրույն ուսումնական նախագծեր մշակելու համար, ինչը խթանում է նրանց ակտիվ մասնակցությունը և ինքնավարությունը [7, 42]: Սակայն տեխնոլոգիաների այս ներխուժումը նաև նոր մարտահրավերներ է առաջ բերում: Երբ ԱԲ-ն դառնում է մշտական օգնական, անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել դրա կիրառումը, որպեսզի այն չփոխարինի ուսուցչին և չսահմանափակի էթիկական ու քննադատական մտածողության զարգացումը [6, 112]: Այս պարագայում ուսուցիչը շարունակում է մնալ առանցքային դերակատար: Արդի տեխնոլոգիաների պարագայում նրա առաքելությունը ոչ միայն գիտելիքի փոխանցումն է, այլև ապահով միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողները կարող են հիմնավորված որոշումներ ընդունել և զարգացնել սոցիալական հմտություններ [1, 84]:

Հոդվածի բովանդակությունը

Ներկայիս բոլոր ուսուցիչներին մտահոգող կրթության հիմնական հարցն այն է, թե ինչպես ստեղծել մի միջավայր, որտեղ ԱԲ-ն կծառայի որպես արդյունավետ գործիք՝ չվնասելով սովորողի ընտրության ազատությունն ու պատասխանատվությունը: ԱԲ-ի վրա հիմնված լուծումները կարող են խաթիլել սովորողի ինքնուրույն մտածողությունը, առաջացնել անվստահություն թե՛ ուսուցչի, թե՛ շրջապատի նկատմամբ, եթե չկա ճիշտ մեթոդական ուղղորդում:

Այս հոդվածի նպատակն է ցույց տալ «Արհեստական բանականության կիրառություններ» թեմայի արդյունավետ ուսումնասիրումը նախագծային մեթոդի կիրառությամբ:

Նախագծի համար սահմանված էին հետևյալ նպատակները.

- Տալ գիտելիք արհեստական բանականության կիրառման, դրա նշանակության և օգտակարության մասին:
- Նկարագրել, թե ինչպես է արհեստական բանականությունը առաջ տանում բազմաթիվ համակարգչային ծրագրերի և ֆիզիկական համակարգերի զարգացումը:

- Ուսումնասիրել ԱԲ-ի ազդեցությունը մարդկային կյանքի վրա:
- Ջարգացնել բանավեճի հմտություններ:
- Ջարգացնել էթիկական որոշումներ կայացնելու հմտություններ:
- Ստեղծել ապագայի սցենարների ինտերակտիվ մոդել (խաղ):
- Ուսումնասիրել ԱԲ գործիքների (ChatGPT, Gemini, Sumo և այլն) ինտեգրման հնարավորությունները նախագծային ուսուցման գործընթացում:

Ինչպես գիտենք, նախագծային մեթոդը թույլ է տալիս սովորողին դուրս գալ պասսիվ սպառողի դերից և դառնալ հետազոտող [3, 24]: Նախագծային աշխատանքի շրջանակներում սովորողները զարգացնում են.

- տեղեկատվության հավաքագրման և վերլուծության հմտություններ,
- փաստարկների մշակման և որոշումների կայացման կարողություններ,
- թիմային համագործակցություն [5, 115]:

Հոդվածի նորույթը ԱԲ գործիքների և նախագծային մեթոդի համադրման մեջ է՝ որպես էթիկապես հիմնավորված ուսուցման ձև: Նախագիծը սկսելու և ռիսկերը վեր հանելու համար սովորողներին տրամադրել են հետևյալ ուղղորդող հարցերը.

1. Որո՞նք են այն մարդկային հմտությունները, որոնք ԱԲ-ն երբեք չի կարողանա փոխարինել:
2. Ինչպե՞ս կփոխվի դպրոցը 10 տարի հետո, եթե յուրաքանչյուր աշակերտ ունենա անհատական ԱԲ-ուսուցիչ:
3. Արդյո՞ք ԱԲ-ն կստեղծի նոր մասնագիտություններ, թե՞ պարզապես կվերացնի եղածները:
4. Ինչպիսի՞ն կլինի աշխարհը, եթե մենք ընդհանրապես հրաժարվենք ԱԲ-ից և վերադառնանք «իրական» կյանքին:
5. Ի՞նչ որոշում կկայացնեն աշակերտները խնդրի լուծմանը ծանոթանալու դեպքում:
6. Ո՞րտեղ կօգտագործվի սովորողների ստեղծածը:

Սովորողների ներկայացրած փաստարկների հիման վրա **առաջին փուլում** ծանոթացրել են նախագծի հիմնախնդրին՝ «Ինչպե՞ս կառուցել տեխնոլոգիական ապագա, որտեղ ԱԲ-ն կլինի օգտակար գործիք, բայց չի զրկի մարդուն իր ազատ ընտրության իրավունքից և էթիկական պատասխանատվությունից»: Իրականացրել են խմբերի բաժանում: Յուրաքանչյուր խմբի հանձնարարել ընտրել մի բնագավառ (օրինակ՝ բժշկություն, տրանսպորտ կամ կրթություն), որտեղ ԱԲ-ն մեծ ազդեցություն ունի:

Երկրորդ փուլում խմբերը սկսել են տեղեկատվություն հավաքել իրենց ընտրած բնագավառում ԱԲ-ի կիրառման մասին: Ուսումնասիրել են իրական օրինակներ (օրինակ՝ Tesla-ի ինքնավար մեքենաները, բժշկական նորագույն սարքավորումները կամ ChatGPT-ն կրթության մեջ) և պարզել, թե ի՞նչ խնդիրներ է լուծում ԱԲ-ն թվարկած բնագավառներից յուրաքանչյուրում և ի՞նչ նոր հարցեր է առաջացնում:

Երրորդ փուլում սովորողները վերլուծել են իրենց իրականացրած հետազոտությունները «Աշխատանքային թերթիկի» միջոցով: Գծել են աղյուսակ, որի մի կողմում նշել են տեխնոլոգիական առավելությունները (արագություն, ճշգրտություն), իսկ մյուս

կողմում՝ մարդկային ռիսկերը (գաղտնիություն, պատասխանատվություն): Կիրառելով ԱԲ գործիքներ՝ ստեղծել են իրենց ուսումնասիրած ԱԲ գործիքների (ChatGPT, Gemini, Suno, Sora, Deepseek, Nano Banana, Qwen Chat) մասին պատմող ինտերակտիվ և շատ ուսուցանող տեսանյութ, որտեղ ներկայացրել են յուրաքանչյուր ԱԲ գործիքի այսպես ասած «գործառնություն» խոսելով առավելությունների և թերությունների մասին: Այս փուլերի ավարտին սովորողների մոտ զարգացել են սովորելու կարողունակություն, թվային և մեդիա կարողունակություն:

Չորրորդ փուլում սովորողները իրականացրել են էթիկական երկընտրանքների մշակում, որի ժամանակ հորինել են «Ի՞նչ կլինի, եթե...» սցենարներ: Ստեղծել են մի իրավիճակ, որտեղ չկա միանշանակ «ճիշտ» կամ «սխալ» պատասխան (օրինակ՝ ԱԲ-ն պետք է ընտրի երկու մարդու կյանքի միջև): Այս մոտեցումը թույլ է տալիս վերլուծել ԱԲ-ի հնարավոր դրական և բացասական ազդեցությունները: Նմանատիպ նորարարական տեխնոլոգիաները պահանջում են ուսուցչի վերափոխումը մենթորի և համակարգողի, ով օգնում է սովորողին հասկանալ տեխնոլոգիայի ազդեցությունը հասարակության վրա [6, 168]:

Հինգերորդ փուլում դասարանը վերափոխվում է բանավեճի ակումբի՝ ձևավորելով «Փրկություն» և «Սպառնալիք» թիմերը: Հայտնի է, որ բանավեճը նպաստում է սովորողների քննադատական մտածողության զարգացմանը, քանի որ նրանք ստիպված են լինում վերլուծել փաստերը, գտնել հիմնավորումներ և հասկանալ հարցի տարբեր կողմերը: Այն զարգացնում է նաև հաղորդակցման հմտություններ, սեփական տեսակետը հստակ ձևակերպելու և դիմացինին հարգալից լսելու կարողություն [4, 28]: Բանավեճի դերը կարևորել են հետևյալ պարզ պատճառով, եթե ԱԲ-ն կարող է տալ պատրաստի պատասխաններ, ապա բանավեճը ստիպում է սովորողին ինքնուրույն կշռադատել այդ պատասխանների արժանահավատությունը և էթիկականությունը: Թիմերը բանավիճում են «ԱԲ. Փրկություն՝, թե՞՝ սպառնալիք» թեմայի շուրջ: Յուրաքանչյուր խումբ փորձում է գտնել լուծումներ՝ օգտագործելով փաստարկներ, որի ընթացքում էլ վեր են հանվում ամենատարբեր հակասությունները: Ստորև ներկայացնում են իրականացրած բանավեճի համառոտ սցենարը.

1. Անհատական թիմային հարցեր

«Փրկություն» թիմի հարցեր և պատասխաններ

1. Ի՞նչ օգտակարություն ունի ԱԲ-ն մարդկանց համար:

Պատասխան՝ ԱԲ-ն օգնում է մարդկանց կյանքը դարձնել ավելի հեշտ և անվտանգ:

Օրինակ՝ բժշկության մեջ այն կարող է արագ հայտնաբերել հիվանդությունները, իսկ կրթության մեջ՝ օգնել յուրաքանչյուրին սովորել իր մակարդակով:

2. ԱԲ-ն կարո՞ղ է փոխարինել մարդուն:

Պատասխան՝ ԱԲ-ն չի փոխարինում մարդուն, այլ օգնում է նրան: Այն կարող է կատարել կրկնվող աշխատանքներ, բայց չի կարող փոխարինել մարդու ստեղծագործ մտածողությանը և զգացմունքներին:

3. Ինչպե՞ս կարելի է կանխել ԱԲ-ի վտանգները:

Պատասխան՝ Պետք է ստեղծել օրենքներ և վերահսկողություն: Եթե ԱԲ-ն ճիշտ օգտագործվի, այն կլինի օգտակար գործիք, ոչ թե վտանգ:

4. Ինչո՞ւ է ԱԲ-ն կարևոր ապագայի համար:

Պատասխան՝ ԱԲ-ն զարգացնում է գիտությունը, տեխնոլոգիան և կրթությունը: Առանց դրա մարդկությունը չի կարող արագ առաջընթաց գրանցել:

«Սպառնալիք» թիմի հարցեր և պատասխաններ

1. Ինչո՞ւ է ԱԲ-ն վտանգավոր:

Պատասխան՝ ԱԲ-ն կարող է դուրս գալ վերահսկողությունից և սխալ որոշումներ ընդունել: Բացի այդ՝ այն կարող է օգտագործվել կեղծ տեղեկություն տարածելու համար:

2. ԱԲ-ն խլո՞ւմ է աշխատատեղերը:

Պատասխան՝ Այո, շատ աշխատանքներ ավտոմատացվում են, և մարդիկ կարող են կորցնել իրենց աշխատանքը: Սա մեծ սոցիալական խնդիր է:

3. Կարո՞ղ է ԱԲ-ն վնասել մարդկանց:

Պատասխան՝ Եթե սխալ ծրագրավորվի կամ օգտագործվի, կարող է վնասել: Օրինակ՝ սխալ բժշկական խորհուրդ կամ վտանգավոր որոշում:

4. Ինչո՞ւ չպետք է լիովին վստահել ԱԲ-ին:

Պատասխան՝ ԱԲ-ն չունի զգացմունքներ և բարոյական արժեքներ: Այն գործում է տվյալների հիման վրա, որոնք միշտ չէ, որ ճիշտ են:

2. Հակադարձ պատասխաններ

Փրկություն: Եթե քեզ հարցնեն «ԱԲ-ն մարդկանց ծուլյ չի՞ դարձնի»:

Պատասխան՝ ԱԲ-ն ազատում է մարդուն ծանր աշխատանքից, որպեսզի նա գրավի ավելի ստեղծարար ու կարևոր գործերով:

Սպառնալիք: Եթե քեզ հարցնեն «Բայց ԱԲ-ն օգնում է բժշկությանը, դա վա՞տ է»:

Պատասխան՝ Այո, օգնում է, բայց սխալների դեպքում հետևանքները շատ վտանգավոր կարող են լինել: Մարդկային վերահսկողությունը պարտադիր է:

Փրկություն: «ԱԲ-ն վտանգավոր է, չէ՞»:

Պատասխան՝ Ցանկացած տեխնոլոգիա կարող է վտանգավոր լինել, եթե սխալ օգտագործվի: Խնդիրը ոչ թե ԱԲ-ն է, այլ նրա օգտագործումը:

Սպառնալիք: «ԱԲ-ն չի՞ օգնում զարգանալ»:

Պատասխան՝ Օգնում է, բայց չափից շատ կախվածությունը կարող է թուլացնել մարդկանց մտածողությունը:

«Ինչպե՞ս կարող ենք վերահսկել ԱԲ-ն»

«Փրկություն» թիմ

Պատասխան՝ ԱԲ-ն հնարավոր է վերահսկել հստակ օրենքների, մասնագետների վերահսկողության և պատասխանատու օգտագործման միջոցով: Պետությունները և կազմակերպությունները կարող են սահմանել կանոններ, որպեսզի ԱԲ-ն գործի մարդու շահերի համար:

Կարճ տարբերակ՝ «ԱԲ-ն գործիք է, և ինչպես ցանկացած գործիք, այն վերահսկվում է մարդու կողմից»:

«Սպառնալիք» թիվ

Պատասխան՝ ԱԲ-ն ամբողջությամբ վերահսկելը շատ բարդ է, քանի որ այն արագ զարգանում է և կարող է ինքնուրույն որոշումներ ընդունել: Կա վտանգ, որ այն կարող է դուրս գալ մարդկային վերահսկողությունից:

Կարճ տարբերակ՝ «Մենք չենք կարող լիովին վերահսկել մի բան, որը մեզանից արագ է զարգանում»:

«Արդյո՞ք ԱԲ-ն կարող է փոխարինել ուսուցչին»

«Փրկություն» թիվ

Պատասխան՝ ԱԲ-ն չի կարող ամբողջությամբ փոխարինել ուսուցչին, բայց կարող է լինել շատ օգտակար օգնական: Ուսուցիչը ոչ միայն գիտելիք է տալիս, այլ նաև դաստիարակում, հասկանում աշակերտին, ինչը ԱԲ-ն չի կարող անել:

Կարճ տարբերակ՝ «ԱԲ-ն կարող է օգնել ուսուցչին, բայց չի կարող փոխարինել նրան»:

«Սպառնալիք» թիվ

Պատասխան՝ ԱԲ-ն արդեն կարող է փոխանցել գիտելիք և բացատրել նյութը, ու ժամանակի ընթացքում կարող է մասամբ փոխարինել ուսուցչին: Մա կարող է հանգեցնել ուսուցիչների դերի նվազմանը:

Կարճ տարբերակ՝ «ԱԲ-ն աստիճանաբար փոխարինում է ուսուցչի որոշ գործառույթներ»:

«Փրկություն» թիվ – Եզրակացություն

Ամփոփելով մենք համոզված ենք, որ ԱԲ-ն մարդկության համար մեծ հնարավորություն է: Այն օգնում է բժշկությանը, կրթությանը և առօրյա կյանքին: Այո, կան որոշ վտանգներ, բայց դրանք կարելի է վերահսկել ճիշտ օգտագործման միջոցով: ԱԲ-ն մեր թշնամին չէ, այլ մեր ապագայի կարևոր գործիքը:

«Սպառնալիք» թիվ – Եզրակացություն

ԱԲ-ն ունի օգտակար կողմեր, սակայն դրա վտանգները անտեսել չի կարելի: ԱԲ-ն հզոր ուժ է, բայց հենց դրա մեջ է վտանգը: Այն կարող է ոչ միայն օգնել, այլ նաև վնասել, եթե դուրս գա վերահսկողությունից: Ապագան չպետք է թողնենք տեխնոլոգիայի ձեռքին առանց սահմանների: Մենք տեսնում ենք նրան որպես **սպառնալիք**, որը պետք է վերահսկել: Բանավեճի միջոցով սովորողների մոտ զարգացել են լեզվական գրագիտություն և կարողունակությունը և ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակությունը:

Վեցերորդ փուլում իրականացվել է նախագծի կարևոր բաղադրիչներից մեկը՝ ԱԲ-ի վրա հիմնված ինտերակտիվ խաղի ստեղծումը, որտեղ սովորողը պետք է ընտրի՝ ապավինել սեփական դատողությանը, թե՞ տեխնոլոգիային: Մա զարգացնում է քննադատական մտածողությունը և օգնում խուսափել ԱԲ-ից կուրորեն կախվածություն ունենալուց: Սովորողները բանավեճից ստացած մտքերը վերածեցին խաղի՝ ընտրեցին խաղի կերպար, որին տվեցին «ԱԲԻՆԱ» անունը: Գծեցին խաղի «ճյուղավորվող քար-

տեզը», մշակեցին անհրաժեշտ իրավիճակներն ու առաջարկվող ընտրանքները: Ստեղծեցին իրավիճակային քարտեր և խաղի կանոնների թերթիկ, որում հստակ ներկայացրեցին նաև գնահատման չափանիշները, համաձայն որի՝ խաղի ավարտին պարզ է դառնում խաղացողի կարգավիճակը.

- ԱԲ-ի գերի է,
- Կարողանում է դատել և կատարել ճիշտ ընտրություն,
- Ընդհանրապես չի օգտագործում ԱԲ, սակայն միշտ չէ, որ դա օգտակար է:

Ցոթերորդ փուլում սովորողները պատրաստեցին խաղի թղթային տարբերակը և փորձարկեցին, որպեսզի վեր հանեն թերությունները և անկանխատեսելի ռիսկերը: Տվեցին հետադարձ կապ. «Արդյո՞ք ընտրությունը դժվար էր», «Արդյո՞ք հետևանքը տրամաբանական էր»:

Ութերորդ և իններորդ փուլերում հիմնվելով խաղի մեջ տեսած վտանգների վրա՝ սովորողները ձևակերպեցին իրենց **«Ինչպե՞ս աշխատել ԱԲ-ի հետ»** անվտանգության կանոնները, որոնք էլ հանդիսացան նախագծի գործնական ուղեցույցի կարևորագույն բաղադրիչները: Ուղեցույցի մեջ սովորողները ներառեցին հետևյալ 10 կետերը.

1. Մի՛ տրամադրիչ անձնական տվյալներ:
2. Մի՛ վստահիր ներկայացված տվյալներին, պարտադիր ստուգիր:
3. ԱԲ-ն օգտագործի՛ր որպես օգնական, այլ ոչ թե ուղեղի փոխարինող:
4. Մի՛ փոխարինիր մասնագետին, հիշի՛ր, որ գործ ունես վիրտուալ գործիքի հետ:
5. Քննարկի՛ր հնարավոր լուծումները:
6. Մի՛ օգտագործիր վնասակար նպատակներով:
7. Մաքրի՛ր բոլոր գլույցների պատմությունները:
8. Զգուշացի՛ր քո կողմից գեներացված նկարներից և տեսանյութերից:
9. Եղի՛ր հարգալից, օգտագործի՛ր էթիկայի կանոնները:
10. Օգտագործի՛ր խելամիտ և պատասխանատվորեն:

Նախագծային ուսուցման ընթացքում ստեղծված ԱԲ անվտանգության ուղեցույցը սովորողներին մղում է իրականացնել տվյալների պաշտպանություն և աղբյուրների ստուգում: Թվային տիրույթում անվտանգության կանոնների պահպանումը և անձնական տվյալների գիտակցված կառավարումը ժամանակակից քաղաքացու անկյունաքարային հմտություններն են [2, 56]: Այս նորարար մոտեցումը թույլ է տալիս գնահատել սովորողների կարողունակությունների բազմակողմանի զարգացումը՝ սկսած տվյալների կառավարումից մինչև ստեղծարարություն [4, 152]: Կարևոր է նաև այն գիտակցությունը, որ ԱԲ-ն դառնում է ավելի ուժեղ, երբ մենք համագործակցում ենք հանուն վաղվա օրվա:

Տասներորդ փուլում ներկայացրին իրենց կողմից իրականացված ավարտուն նախագծի արդյունքները:

Եզրակացություն

Այս աշխատանքում ուսումնասիրվել են 10-րդ դասարանում ուսումնասիրվող «Արհեստական բանականության կիրառություններ» թեմայի դասավանդման առանձնահատկությունները նախագծային մեթոդի միջոցով: Հետազոտության կենտրոնում եղել է տեխնոլոգիական գործիքների և մանկավարժական ժամանակակից մոտեցումների համադրումը՝ սովորողների քննադատական մտածողության և թվային գրագիտության բարձրացման նպատակով: Հետազոտության ընթացքում իրականացվել է նախագծային ուսուցում, որտեղ ԱԲ գործիքները դիտարկվել են ոչ թե որպես պատրաստի լուծումներ սովորող միջոցներ, այլ որպես հետազոտության օգնականներ: Աշխատանքը ներառել է բանավեճի և էթիկական երկրնորանքների վերլուծություն, թվային անվտանգության ուղեցույցի մշակում և ինտերակտիվ խաղի կիրառում:

Ամփոփելով՝ կարող ենք պնդել, որ ժամանակակից կրթության գլխավոր մարտահրավերը ոչ թե ԱԲ-ից հրաժարվելն է, այլ դրա խելամիտ և էթիկապես հիմնավորված ինտեգրումը դպրոցական ծրագրերում: Նախագծային մեթոդը թույլ է տալիս կրթել մի սերունդ, որը տեխնոլոգիան դիտարկում է որպես հզոր օգնական՝ միաժամանակ պահպանելով մարդկային անփոխարինելի արժեքները՝ ստեղծարարությունը, ապրումնականությունը և ազատ ընտրության իրավունքը:

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-94>

Գրականություն

1. Ադամյան Ն., Դասավանդման մեթոդիկայի արդի տեխնոլոգիաներ: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Էդիթ Պրինտ», 2018, 264 էջ:
2. Գյոզալյան Ս., Թվային գրագիտություն և սովյալների անվտանգություն, Երևան, 2019, 144 էջ:
3. Գյոզալյան Ս., Նախագծային ուսուցում: Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Էդիթ Պրինտ», 2021, 128 էջ:
4. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ մեթոդներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, 74 էջ:
5. Մարգարյան Ա., Պետրոսյան Լ., Դասավանդման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ, Երևան, 2018, 208 էջ:
6. Полат Е. С. Новые педагогические и информационные технологии в системе образования, Москва: Издательский центр «Академия», 2008. – 272 с.
7. Holmes W., Bialik M., Fadel C. Artificial Intelligence in Education: Promises and Implications for Teaching and Learning, Center for Curriculum Redesign, 2019, 256 p.

Обучение теме «Применение искусственного интеллекта» с использованием метода проектного обучения

Асрян Гаяне

Резюме

Ключевые слова: проектное обучение, критическое мышление, интерактивная игра, руководство по безопасности, этические решения, автономия учащегося, менторство

В данной работе были изучены особенности преподавания темы «Применения искусственного интеллекта» в 10-м классе с использованием проектного метода. В центре исследования находилось сочетание технологических инструментов и современных педагогических подходов с целью повышения критического мышления и цифровой грамотности учащихся. В ходе исследования было реализовано проектное обучение, в котором инструменты ИИ рассматривались не как средства предоставления готовых решений, а как помощники в исследовании. Работа включала проведение дебатов, анализ этических дилемм, разработку руководства по цифровой безопасности и использование интерактивной игры. Подводя итог, можно утверждать, что главным вызовом современного образования является не отказ от ИИ, а его разумная и этически обоснованная интеграция в школьные программы. Проектный метод позволяет воспитать поколение, которое рассматривает технологии как мощного помощника, сохраняя при этом незаменимые человеческие ценности: креативность, эмпатию и право на свободный выбор.

Teaching the Topic “Applications of Artificial Intelligence” through the Project-Based Learning Method

Asryan Gayane

Summary

Key words: project-based learning, critical thinking, interactive game, safety guide, ethical decisions, learner autonomy, mentoring

This study explored the peculiarities of teaching the topic “Applications of Artificial Intelligence” in the 10th grade through the project-based learning method. The research focused on combining technological tools with modern pedagogical approaches to enhance students' critical thinking and digital literacy. During the study, project-based learning was implemented, where AI tools were viewed not as providers of ready-made solutions, but as research assistants. The work included debates, analysis of ethical dilemmas, development of a digital security guide, and the use of an interactive game. In conclusion, it can be argued that the primary challenge of modern education is not the rejection of AI, but its wise and ethically grounded integration into school curricula. The project-based method allows for the education of a generation that views technology as a powerful assistant while preserving irreplaceable human values: creativity, empathy, and the right to free choice.

Ներկայացվել է 01. 04. 2026 թ.

Գրախոսվել է 03. 04. 2026 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Պայրոցների ուսումնական արհեստանոցների նյութատեխնիկական
բազաների արդի վիճակի հետազոտում**

*Խողերյան Բորիս,
Հակոբյան Աննա,
Պողոսյան Հովհաննես*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-102>

***Հանգուցային բառեր.** հաստոցներ, գործիքներ, սարքավորումներ, ուսումնական միջավայր, գործնական հմտություններ, կտրող և չափող գործիքներ, նյութատեխնիկական պայմաններ, կրթության որակ*

Նախաբան

«Տեխնոլոգիա» կրթական ոլորտը հանդիսանում է ուսուցման անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դպրոցականների դաստիարակության և զարգացման գործում: Տեխնոլոգիան բազմաբնույթ առարկա է, իր մեջ ընդգրկում է բնական և արհեստական նյութերի մեխանիկական և գեղարվեստական մշակումներ [1-3]: Տեխնոլոգիայի դասերը կրում են համակցված բնույթ՝ ներառելով թե՛ տեսական գիտելիքներ, թե՛ գործնական աշխատանքներ: Նախկինում բոլոր դպրոցները ունեին հազեցված ուսումնական արհեստանոցներ և մասնագիտացված կաբինետներ: Նշված արհեստանոցներում տեղադրված էին փայտամշակման և մետաղամշակման ուսումնասարտադրական հաստոցներ և սարքավորումներ: Բոլոր արհեստանոցները, բացի անհրաժեշտ հաստոցներից, ապահովված էին նաև կտրող և չափիչ գործիքներով [5]: Ցավոք, պետք է նշել, որ հետխորհրդային տարիներին, հատկապես 1990-ականներին մեր հանրապետության դպրոցների մեծամասնությունում ուսումնական արհեստանոցները քայքայվեցին, շատ քիչ դպրոցներում պահպանվեցին դրանք: Մինչդեռ տեխնոլոգիայի արհեստանոցները կարևոր դեր են կատարում սովորողների գործնական հմտությունների ձևավորման, ստեղծագործական մտածողության զարգացման և տեխնիկական գիտելիքների ամրապնդման գործում:

Հետազոտության հիմնախնդիրը: Հետազոտության արդյունքում բացահայտվել է, որ Հայաստանի հանրակրթական դպրոցների մեծամասնությունում տեխնոլոգիայի ուսուցողական արհեստանոցները ապահովված չեն անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով կամ գտնվում են քայքայված վիճակում, ինչը խոչընդոտում է լիարժեք դասապրոցեսի կազմակերպմանը:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է ներկայացնել դպրոցում գործող տեխնոլոգիայի ուսումնական արհեստանոցների ներկայիս վիճակը, գնահատել դրանց հազեցվածությունը և պարզել հնարավոր ուղղություններ՝ ուսուցման արդյունավետության և որակի բարելավման համար:

Հետազոտության նորույթը: Հետազոտությունը ներկայացնում է համապարփակ գնահատումը Հայաստանի հանրակրթական դպրոցներում տեխնոլոգիայի ուսումնական արհեստանոցների նյութատեխնիկական բազայի վերաբերյալ ընդգրկելով դրանց սարքավորումներն ու գործիքները, գործունեության մակարդակը:

Հիմնական նյութ: «Տեխնոլոգիա» առարկայի արդյունավետ ուսուցումն անմիջականորեն կախված է դպրոցների նյութատեխնիկական բազայից, որը ապահովում է տեսական գիտելիքների կիրառումը գործնականում:

Նյութատեխնիկական բազան «Տեխնոլոգիա» դասերի համար ընդգրկում է փայտամշակման և մետաղամշակման ուսումնական արհեստանոցները, անհրաժեշտ սարքավորումները և հաստոցները, կտրող և չափիչ գործիքները:

Դպրոցների նյութատեխնիկական բազայի հագեցվածության մասին տեղեկությունները ստացվել են հարցումների միջոցով, ընդգրկվել են մոտ 100 դպրոցներ Երևանում և մարզերում: Այն դրպոցներ, որոնց նյութատեխնիկական բազան գտնվում է բարենպաստ վիճակում, կատարվել է այցելություն, մասնավորապես՝ ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց, Արմավիրի մարզի Գետաշեն բնակավայրի միջնակարգ դպրոց, Էջմիածին քաղաքի թիվ 5 ավագ դպրոց, Կոտայքի մարզի Արովյանի թիվ 2 հիմնական դպրոց, Եղվարդ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց, Երևան քաղաքի թիվ 33 հիմնական դպրոց, Երևան քաղաքի Նար-Դոսի անվան թիվ 14 հիմնական դպրոց:

Ստորև ներկայացվում են որոշ դպրոցների նյութատեխնիկական բազաների վերաբերյալ տեղեկություններ՝


1. Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը գտնվում է Արարատ քաղաքի Խանջյան փողոց 63 հասցեում: Դպրոցը գործում է 1976 թվականից և ունի համայնքային կրթօջախի երկարամյա գործունեության պատմություն: Դպրոցի «Տեխնոլոգիայի» ուսումնական արհեստանոցը հագեցված է բոլոր սարքավորումներով: Նկար 1-ում բերվում է Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի տեխնոլոգիայի հասկացված ուսումնական արհեստանոցի տեսքը:



Նկար 1. Արարատ քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցի ընդհանուր տեսքը

2. Արովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը նորակառույց կրթօջախ է: Այն կառուցվել է ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի համաֆինանսավորմամբ և նախատեսված է շուրջ 1000 աշակերտի համար: Դպրոցը շահագործման է հանձնվել 2025 թվականի մարտի 1-ին: Շենքն ունի երեք վերելակ, լաբորատոր դասարաններ: Դպրոցը հագեցած է ուսումնական բոլոր սարքավորումներով:

Նկար 2-ում ներկայացված են տեխնոլոգիայի ուսումնական արհեստանոցների նկարները:



Նկար 2. Աբովյան քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցների ընհանուր տեսքը

3. **Եղվարդի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը** հագեցած է ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Նկար 3-ում ներկայացված է դպրոցի ուսումնական արհեստանոցի կահավորումը:



Նկար 3. Եղվարդի թիվ 2 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցի սարքավորումները

4. **Երևան քաղաքի թիվ 33 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը** հիմնադրվել է 1921 թվականին: 1982 թվականին կառուցվել է Միքայել Նալբանդյանի անվան թիվ 33 միջնակարգ դպրոցի նոր շենքը՝ բաղկացած 2 մասնաշենքերից: Դպրոցը հագեցած է ուսումնական բոլոր սարքավորումներով: Նկար 4-ում ներկայացված են դպրոցի ուսումնական արհեստանոցի կահավորման նկարները:



Նկար 4. Երևան քաղաքի թիվ 33 հիմնական դպրոցի հաստոցները

5. Երևան քաղաքի թիվ 14 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1929 թվականին: Ներկայիս տիպային շենքը շահագործման է հանձնվել 1984 թվականին և նախատեսված է 1176 աշակերտի համար: Դպրոցը հագեցած է ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Նկար 5-ում ներկայացված է դպրոցի ուսումնական արհեստանոցի կահավորումը:



Նկար 5. Երևան քաղաքի թիվ 14 հիմնական դպրոցի ուսումնական արհեստանոցի ընդհանուր տեսքը


6. Արմավիրի մարզի Գետաշեն բնակավայրի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ - ը իրականացնում է «AgroSchool» ջերմոցային ծրագիրը, որի շրջանակում աշակերտները մասնակցում են գյուղատնտեսական աշխատանքների և ձեռք բերում նյութական արտադրության ու սննդի տեխնոլոգիայի գործնական հմտություններ: Դպրոցը հագեցած է ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր սարքավորումներով:

Նկար 6-ում պատկերված են Գետաշենի միջնակարգ դպրոցի ուսումնական հաստոցները:



Նկար 6. Գետաշենի միջնակարգ դպրոցի ուսումնական հաստոցներ

Հետազոտության շրջանակներում Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր կատարված այցերի ընթացքում իրականացվել են հարցումներ տարբեր դպրոցների տնօրենների շրջանում, ինչպես նաև կատարվել է ստացված տվյալների վիճակագրական վերլուծություն: Հարցմանը մասնակցել են շուրջ 100 հանրակրթական դպրոցներ:



Տրամագիր 1. Հանրակրթական դպրոցներում «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական արհեստանոցների առկայության վերաբերյալ

Վերլուծության արդյունքում պարզվել է, որ հարցված դպրոցներից 82-ում տեխնոլոգիայի առարկայի ուսումնական արհեստանոցներ առհասարակ բացակայում են: 8 դպրոցներում առկա արհեստանոցները չեն գործում՝ հին և քայքայված վիճակում գտնվելու պատճառով: 3 դպրոցներում ստեղծված են համեմատաբար նորմալ պայմաններ, սակայն բացակայում են համապատասխան մասնագետ-մանկավարժները, որոնք կարող են շահագործել սարքավորումները և կազմակերպել ուսուցման գործընթացը: Միայն 7 դպրոցներում առկա են գործող և բավարար հազեցվածությամբ ուսումնական արհեստանոցներ, որտեղ իրականացվում է լիարժեք դասապրոցես: Ստացված արդյունքները վկայում են, որ պետական նոր չափորոշիչի համապատասխան տեխնոլոգիա առարկայի արդյունավետ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ է հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի համալիր վերազինում և արդիականացում:

«Տեխնոլոգիա առարկայի ուսումնական արհեստանոցների նյութատեխնիկական բազաների արդի վիճակի հետազոտումը» թեմայի SWOT վերլուծություն

«Տեխնոլոգիա առարկայի հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազաների արդի վիճակի հետազոտումը» թեմայի SWOT վերլուծությունը (Strengths, Weaknesses, Opportunities, Threats, տե՛ս աղյուսակ 1) կօգնի պարզել ինչ ուժեղ կողմեր և հնարավորություններ ունի հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազան:

SWOT վերլուծության արդյունքները

<p>Ուժեղ կողմեր (Strengths)</p> <p>Տեխնոլոգիա առարկան ներառում է պրակտիկ աշխատանքներ, որոնց համար անհրաժեշտ են հիանալի նյութատեխնիկական պայմաններ՝ բարձրորակ սարքավորումներով ու նյութերով: Նման պայմանները կարող են ապահովել սովորողներին բարձրորակ կրթություն:</p>	<p>Թույլ կողմեր (Weaknesses)</p> <p>Որպես կանոն, հանրակրթական դպրոցները չեն ունենում բավարար բյուջե նոր տեխնիկայի ձեռքբերման կամ արդիականացման համար, ինչը կարող է սահմանափակել կրթական գործընթացի արդյունավետությունը:</p>
<p>Հնարավորություններ (Opportunities)</p> <p>Համալրված նոր սարքավորումների և ավտոմատացման համակարգերի ներդրումը կարող է էապես բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:</p>	<p>Վտանգներ (Threats)</p> <p>Ուսումնական արհեստանոցներում տեխնիկական լուրջ խափանումները կամ սարքավորումների մաշվածությունը կարող են սահմանափակել ուսումնական գործընթացը և միաժամանակ բերել վտանգավոր իրավիճակներ:</p>

Եզրակացություն

Ամփոփելով մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

- «Տեխնոլոգիա» առարկայի դասերը կրում են տեսական և գործնական աշխատանքների համակցված բնույթ, ինչը պահանջում է համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայություն:
- Միջին դպրոցում լիարժեք կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված փայտամշակման և մետաղամշակման արհեստանոցներ կամ համակցված արհեստանոց:
- «Տեխնոլոգիա» առարկայի դասերը լիարժեք կազմակերպելու և անցկացնելու նպատակով անհրաժեշտ է արհեստանոցները ապահովվել անհրաժեշտ կտրող և չափող գործիքներով:
- Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հանրապետության մեծ մասի դպրոցներում «Տեխնոլոգիա» առարկան չունի բավարար նյութատեխնիկական բազա, իսկ որոշ դպրոցներում առկա արհեստանոցները չեն գործում:
- «Տեխնոլոգիա» առարկայի ուսումնական արհեստանոցները անհրաժեշտ է կառավարել ուսումնաարտադրական հաստոցներով, այդ թվում խառատապտուտակահան, հորիզոնական ֆրեզերային, գայլիկոնային և փայտամշակման խառատային հաստոցներով, որոնք արտադրուվում են ՌԴ-ում:

DOI: [https://doi.org/ 10.58726/27382923-2026.1ns-102](https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-102)

Գրականություն

1. Հովսեփյան Ս. և ուրիշներ, «Տեխնոլոգիա» առարկայի հանրակրթական դպրոցի չափորոշիչ և ծրագիր (1–7-րդ դասարաններ), Երևան, 2012, 116 էջ:
2. Հովսեփյան Ս., Լևոնյան Հ., Տեխնոլոգիական կուլտուրայի ձևավորումը որպես «Տեխնոլոգիա» կրթական համակարգի հիմնական նպատակ, Մանկավարժություն, № 4, Երևան, 2003:
3. «Տեխնոլոգիա» առարկայի չափորոշիչ և ծրագիր (1–6-րդ դասարաններ). Երևան, 2021 Հասանելի է՝ <https://escs.am/files/files/2021-05-06/52281f19fbac2f31da817f6997111733.pdf> (դիտվել է 20.09.2025):
4. Тхоржевский Д. А. Методика трудового обучения: учеб. пос. для уч-ся пед. училищ. Москва: Просвещение, 1981, 268 с.
5. Хотунцев Ю. Л. Образовательная область «Технология» в культуросообразной школе. Мир образования – образование в мире, 2002, №2, с. 122–132.

Исследование современного состояния материально-технической базы школьных мастерских

*Ходерян Борис,
Акопян Анна,
Погосян Оганес*

Резюме

Ключевые слова: станки, инструменты, оборудование, учебная среда, практические навыки, режущие и измерительные инструменты, материально-технические условия, качество образования

В статье рассматривается текущее состояние и материально-техническое обеспечение учебных мастерских по предмету «Технология» в общеобразовательных школах Армении. Представлены данные школ Еревана и различных регионов, охватывающие мастерские по деревообработке и металлообработке, необходимое оборудование, станки, режущие и измерительные инструменты, а также средства безопасности. Исследование показывает, что большинство школ не имеют достаточной материально-технической базы, а существующие мастерские часто находятся в ветхом состоянии или лишены квалифицированных педагогов для проведения эффективных занятий. Анализируются ключевые проблемы и потенциальные риски, а также даются рекомендации по повышению качества обучения и результатов учебного процесса, включая внедрение современного оборудования, автоматизированных систем и комплексного обслуживания мастерских. Полностью оснащенные и модернизированные мастерские позволяют педагогам сочетать теоретические знания с практическими навыками, развивая у учеников творческое мышление, технические способности и практические умения при обеспечении безопасной и эффективной учебной среды. Подчеркивается, что совершенствование материально-технической базы необходимо для успешной реализации учебной программы «Технология». Улучшение ресурсов способствует развитию у школьников навыков решения проблем, практического мышления и понимания механических и художественных процессов. Результаты исследования показывают важность постоянных инвестиций в школьные мастерские для обеспечения комплексного обучения и практического опыта.

Study of the Current State of the Material and Technical Base of School Workshops

*Khoderyan Boris,
Hakobyan Anna,
Poghosyan Hovhannes*

Summary

Key words: *machines, tools, equipment, learning environment, practical skills, cutting and measuring tools, material-technical conditions, quality of education*

The article examines the current state and material-technical provision of technology classrooms in Armenian general education schools. Data from schools in Yerevan and various regions are presented, covering woodworking and metalworking workshops, necessary equipment, machinery, cutting/measuring tools, and safety resources. The study reveals that most schools lack sufficient material-technical resources, and existing workshops are often dilapidated or lack qualified instructors to conduct effective lessons. The research analyzes key challenges, potential risks, and provides recommendations to improve teaching quality and learning outcomes, including the introduction of modernized equipment, automation systems, and comprehensive maintenance plans. Fully equipped and modernized workshops allow teachers to combine theoretical knowledge with practical skills, fostering students' creative thinking, technical abilities, and hands-on competencies while ensuring a safe and efficient learning environment. The article emphasizes that improving the material-technical base is essential for the effective implementation of the "Technology" curriculum. Enhancing resources supports the development of students' problem-solving skills, practical thinking, and understanding of mechanical and artistic processes. The findings highlight the importance of continuous investment in school workshops to ensure that students acquire both theoretical knowledge and practical experience in technology education.

Ներկայացվել է 01. 04. 2026 թ.
Գրախոսվել է 13. 04. 2026 թ.
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Երկրաչափական և օպտիկական պատկերացումների փոխկապակցված
զարգացումը. տիպային սխալների ախտորոշում և շտկում**

*Մանուկյան Վարդան,
Նիկողոսյան Գագիկ*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-110>

Հանգուցային բառեր. միջառարկայական կապեր, կոզնիտիվ տրանսֆեր, պատկերների կառուցում, ուսուցման մեթոդիկա, կրթություն, գիտելիքներ

Նախբան

Ժամանակակից կրթական բարեփոխումների համատեքստում բնագիտամաթեմատիկական առարկաների փոխկապակցված ուսուցումը դիտարկվում է որպես սովորողների վերլուծական մտածողության զարգացման առանցքային գործոն: Սույն հետազոտության արդիականությունը բխում է Հանրակրթության պետական նոր չափորոշիչների պահանջներից, որոնք շեշտադրում են կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը և միջառարկայական կապերի միջոցով աշխարհի ամբողջական պատկերի ձևավորումը [1]: Սակայն դպրոցական պրակտիկական ցույց է տալիս, որ հաճախ աշակերտների մոտ առկա է գիտելիքների մասնատվածություն, ինչը հասկապես ակնառու է դառնում երկրաչափության և ֆիզիկայի «Երկրաչափական օպտիկա» բաժնի հպման կետերում: Խնդիրն այն է, որ ֆիզիկայի առարկայական չափորոշիչով նախատեսված վերջնարդյունքները, ինչպիսիք են լուսային ճառագայթների ընթացքի կառուցումը և պատկերների բնութագրումը, ուղղակիորեն կախված են երկրաչափության չափորոշիչով սահմանված հարթաչափական գիտելիքների կիրառման մակարդակից:

Հիմնախնդրի շուրջ իրականացված դասական հետազոտությունների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ երկրաչափական սխալների արմատները հաճախ թաքնված են կոզնիտիվ զարգացման փուլային բացթողումների մեջ: Ինչպես նշում է Ա. Վ. Պյորիշկինը, օպտիկական երևույթների ընկալման հիմքում ընկած է երկրաչափական մոդելավորումը, և ցանկացած թերացում գծագրական հմտություններում անխուսափելիորեն հանգեցնում է ֆիզիկական սխալ եզրակացությունների [3]: Այս տեսանկյունից էական է Ա. Վ. Պոգորելովի մոտեցումը, ով երկրաչափական պատկերացումների ձևավորումը դիտարկում էր որպես տրամաբանական խիստ շղթա. այդ շղթայի խզումը ֆիզիկական միջավայրում ստեղծում է «մեխանիկական պատկերման» խնդիրը [4]: Պ. Վան Հիլիի տեսության համաձայն՝ երկրաչափական մտածողության ցածր մակարդակը խոչընդոտում է արատրակտ սխեմաների ընկալմանը, ինչը ֆիզիկայում դրսևորվում է որպես ճառագայթների ընթացքի ոչ գիտակցված պատկերում [6]: Եվրոպական մեթոդական դպրոցի ներկայացուցիչները, մասնավորապես Ռ. Դուադին, շեշտում են «գործիքային» և «առարկայական» գիտելիքների տարանջատման վտանգը, երբ աշակերտը չի կարողանում երկրաչափական թեորեմը ծառայեցնել որպես գործիք օպտիկական խնդրի լուծման համար [5]:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ՝ 25RG-5C032 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Հայրենական մանկավարժական մտքի շրջանակներում միջառարկայական կապերի հարցը դիտարկվել է բազմաթիվ գիտնականների կողմից: Է. Ղազարյանի աշխատություններում ընդգծվում է, որ մաթեմատիկայի և ֆիզիկայի ինտեգրումը պետք է կրի բովանդակային բնույթ՝ կողմնորոշվելով դեպի սովորողների տրամաբանական սխալների կանխարգելումը [2]:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել երկրաչափության դասընթացում հանդիպող տիպային սխալների և օպտիկական թուրքմբռնումների միջև առկա օրինաչափ կապերը և մշակել ու հիմնավորել այդ սխալների հաղթահարման մեթոդական որոշակի մոտեցումներ: Այս նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ իրականացնել սովորողների գծագրական հմտությունների և երկրաչափական տրամաբանության ախտորոշում, վերհանել օպտիկայի բաժնում դրանցից ածանցվող սխալները և հիմնավորել ուսուցման զուգահեռված մոտեցման արդյունավետությունը՝ համահունչ ժամանակակից կրթական չափորոշիչների պահանջներին:

Աշխատանքի գիտամեթոդական նորույթը սխալների դասակարգման «տրանսֆերային մոդելի» առաջադրման մեջ է, որտեղ երկրաչափական սխալը դիտարկվում է որպես ֆիզիկական խնդրի լուծման ձախողման առաջնային պատճառ: Սույն մոտեցումը թույլ է տալիս ստեղծել շտկողական վարժությունների համակարգ, որը միաժամանակ զարգացնում է և՛ տարածական պատկերացումը, և՛ ֆիզիկական երևույթի էության ընկալումը: Այսպիսով, հետազոտությունը փորձ է կատարում կամրջելու երկու առարկաների մեթոդիկաները՝ ստեղծելով միասնական տրամաբանական հենք սովորողների համար:

Անկյունների և ուղղահայացության ընկալման տիպային սխալները երկրաչափության մեջ և դրանց արտացոլումը լույսի անդրադարձման օրենքում

Երկրաչափական օպտիկայի դասընթացի յուրացումը սկսվում է լույսի անդրադարձման օրենքի ուսումնասիրությունից, որտեղ հիմնարար դեր ունեն «ուղղահայաց», «անկման անկյուն» և «անդրադարձման անկյուն» հասկացությունները: Սակայն փորձը ցույց է տալիս, որ աշակերտների զգալի մասը թույլ է տալիս կայուն սխալներ, որոնց ակունքները գտնվում են հարթաչափության դասընթացի թերի յուրացված հատվածներում:

➤ Երկրաչափական ախտորոշում:

Հարթաչափության մեջ աշակերտները սովորաբար աշխատում են անկյունների հետ, որոնց կողմերից մեկը հորիզոնական է: Սա ձևավորում է տեսողական ստերեոտիպ, որտեղ «ուղղահայացը» ընկալվում է որպես թղթի ստորին եզրին ուղղահայաց գիծ: Երբ երկրաչափական խնդրում ուղիղը պատկերվում է թեքությամբ, աշակերտների մոտ դժվարանում է սովյալ կետում ուղղահայացի (կամ բարձրության) ճիշտ կառուցումը: Մյուս խնդիրը կից անկյունների լրացման հատկությունն է: Եթե տրված է որևէ α անկյուն, աշակերտը մեխանիկորեն փնտրում է դրա հարևանությամբ գտնվող անկյունը, բայց հաճախ սխալվում է $90^\circ - \alpha$ և $180^\circ - \alpha$ հարաբերակցությունների մեջ:

➤ Տրանսֆերային սխալը օպտիկայում:

Այս երկրաչափական անճշտությունները ուղղակիորեն պրոյեկտվում են լույսի անդրադարձման օրենքի վրա: Հիմնական սխալներն են.

- Նորմալի (ուղղահայացի) անտեսում. ֆիզիկական խնդիր լուծելիս աշակերտը անկման անկյունը չափում է ոչ թե անկման կետում տարված նորմալից, այլ հայելու մակերևույթից: Սա բխում է այն երկրաչափական սխալից, որ աշակերտը «անկյուն»

ասելով հասկանում է տեսանելի երկու գծերի (ճառագայթի և հայելու) կազմած պատկերը, այլ ոչ թե արստրակտ կառուցված ուղղահայացի նկատմամբ շեղումը:

- Միսլ կողմնորոշում թեք հայելիների դեպքում. եթե հայելին պատկերված է թեքությամբ, աշակերտը նորմալը հաճախ գծում է ուղղահայաց դեպի վեր (ըստ թղթի եզրի), այլ ոչ թե ուղղահայաց հայելու մակերևույթին:

➤ **Հաղթահարման մեթոդական հնարներ:**

Մխակների շտկման համար առաջարկվում է կիրառել «հակադարձ վարժանքի» մեթոդը: Մինչ օպտիկական խնդիրներին անցնելը անհրաժեշտ է կատարել հետևյալ երկրաչափական վարժությունները.

1. «Շրջված ուղղահայացներ». պատկերել տարբեր թեքությամբ ուղիղներ և պահանջել կառուցել դրանց ուղղահայացները տրված կետում՝ օգտագործելով միայն քանոն և անկյունաքանոն:

2. «Թաքնված անկյուն». տրվում է ուղղի հետ կազմած որևէ β անկյուն և պահանջվում է գտնել ուղղահայացի հետ կազմած անկյունը՝ առանց անկյունաչափի, գուտ տրամաբանական լրացման միջոցով:

Այս մոտեցումը թույլ է տալիս աշակերտին գիտակցել, որ օպտիկական անկյունը ոչ թե տեսողական պատկեր է, այլ երկրաչափական կառուցման արդյունք:

Համաչափության (սիմետրիայի) ընկալման խնդիրները երկրաչափության մեջ և պատկերի կառուցումը հարթ հայելու

Հարթ հայելում առարկայի պատկերի կառուցումը ֆիզիկայի դասընթացի այն թեմաներից է, որտեղ աշակերտի երկրաչափական գիտելիքը պետք է վերածվի գործնական հմտության: Մակայն այս փուլում ի հայտ են գալիս խորքային թյուրբմբռնումներ, որոնք կապված են առանցքային համաչափության սխալ ընկալման հետ:

➤ **Երկրաչափական ախտորոշում:**

Մաթեմատիկայի դասերին աշակերտները սովորում են առանցքային համաչափության սահմանումը. երկու կետեր կոչվում են համաչափ ուղղի նկատմամբ, եթե այդ ուղիղը հանդիսանում է այդ կետերը միացնող հատվածի միջնուղղահայացը, այսինքն, եթե կետերը գտնվում են այդ ուղղին ուղղահայաց զծի վրա և նրանից ունեն հավասար հեռավորություն: Տիպային սխալն այստեղ «տեսողական զուգահեռականությունն» է: Երբ համաչափության առանցքը թեք է, աշակերտը հաճախ համաչափ կետը տեղադրում է ոչ թե առանցքին ուղղահայաց զծի վրա, այլ պարզապես առանցքից «աջ» կամ «ձախ»՝ պահպանելով հորիզոնական կապը: Մա նշանակում է, որ աշակերտը չի գիտակցում ուղղահայացության անհրաժեշտությունը որպես սիմետրիայի պարտադիր պայման:

➤ **Տրանսֆերային սխալը օպտիկայում:**

Հարթ հայելում պատկերի կառուցման ժամանակ (որը հանդիսանում է առարկայի համաչափ պատկերը հայելու հարթության նկատմամբ) այս սխալը դրսևորվում է մի քանի ձևով.

- Պատկերի շեղում. աշակերտը պատկերը գծում է հայելու հետևում, բայց ոչ թե առարկայից տարված ուղղահայացի վրա, այլ պարզապես «դիմացը»: Արդյունքում խախտվում է հայելային անդրադարձման հիմնական երկրաչափական սկզբունքը:
- Հեռավորության սխալ գնահատում. հաճախ աշակերտները պատկերը տեղադրում են կամայական հեռավորության վրա՝ անտեսելով այն փաստը, որ հայե-

լուց մինչև առարկա և հայելուց մինչև պատկեր հեռավորությունները պետք է լինեն խստիվ հավասար:

- Ձախի և աջի շվիթություն. քանի որ աշակերտը չի տիրապետում կետ առ կետ համաչափ պատկեր կառուցելու մեթոդին, նա դժվարանում է պատկերել բարդ առարկաների (օրինակ՝ թեքված տառերի կամ սլաքների) հայելային անդրադարձը սխալմամբ պահպանելով առարկայի սկզբնական կողմնորոշումը:

➤ **Հաղթահարման մեթոդական հնարներ:**

Որպեսզի օպտիկական պատկերը չլինի պարզապես «ենթադրյալ գծագիր», առաջարկվում է կիրառել «Կետային պրոյեկցիայի» մոտեցումը:

1. Երկրաչափական նախավարժանք. աշակերտին տրվում է անկանոն բազմանկյուն և մի թեք ուղիղ: Պահանջվում է բազմանկյան յուրաքանչյուր գագաթից տանել ուղղահայաց առանցքին, չափել հեռավորությունը և նույնչափ շարունակել հակառակ կողմում: Սա ստիպում է աշակերտին հասկանալ, որ ամբողջական պատկերը կազմված է առանձին կետերի համաչափությունից:

2. Ինքնաստուգման մեթոդ. օպտիկական խնդիրը լուծելիս աշակերտին հանձնարարվում է թղթի վրա գծված պատկերը ծալել հայելու գծով: Եթե առարկան և պատկերը չեն համընկնում, ուրեմն երկրաչափական կառուցումը սխալ է: Սա վիզուալ և շոշափելի ձևով ապացուցում է սիմետրիայի օրենքը:

Այսպիսով, հարթ հայելում պատկերի կառուցումը դադարում է լինել զուտ ֆիզիկական երևույթի հիշողություն և դառնում է կառուցողական երկրաչափական գործողություն, որտեղ սխալի հավանականությունը նվազում է շնորհիվ հստակ ալգորիթմի:

Նմանության տեսությունը և բարակ ոսպնյակի բանաձևը. մաթեմատիկական համարմանությունների սխալ կիրառումը ֆիզիկական հաշվարկներում

Այս ենթաբաժնում մենք դուրս ենք գալիս զուտ գծագրական տիրույթից և անցնում ենք երկրաչափական տրամաբանության և հանրահաշվական հմտությունների համադրմանը:

➤ **Երկրաչափական ախտորոշում:**

Եռանկյունների նմանության թեման հարթաչափության ամենաբարդ բաժիններից է: Աշակերտների հիմնական սխալները կապված են նմանության գործակցի (k) սխալ որոշման հետ: Հաճախ նրանք չեն կարողանում ճիշտ համադրել համապատասխան կողմերը, հատկապես երբ նման եռանկյունները գտնվում են «ավազի ժամացույցի» դիրքով (գագաթներով միացած, բայց հակադիր ուղղված): Մեկ այլ խնդիր է համեմատականության կանոնների կիրառումը, երբ գործ ունենք կոտորակային հավասարումների հետ. աշակերտները հաճախ դժվարանում են ճիշտ արտահայտել անհայտ կողմը հավասարման մեջ:

➤ **Տրանսֆերային սխալը օպտիկայում:**

Բարակ ոսպնյակի միջոցով պատկերի կառուցման և հաշվարկման ժամանակ այս բացթողումները հանգեցնում են հետևյալ սխալներին.

- Գծային խոշորացման սխալ ընկալում. ֆիզիկայում խոշորացումը սահմանվում է որպես $G = \frac{H}{h} = \frac{f}{d}$ հարաբերություն, որտեղ H -ը պատկերի բարձրությունն է, h -ը՝ առարկայի բարձրությունը, f -ը պատկերի հեռավորությունն է ոսպնյակից, d -ը՝ առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Աշակերտները հաճախ շվիթում են համարիչն ու հայտարարը, քանի որ չեն տեսնում այդ բանաձևի երկրաչափական ծագումը՝ նման եռանկյունների կողմերի հարաբերակցությունը: Եթե աշակերտը չի

նույնականացնում առարկայի բարձրությունը և պատկերի հեռավորությունը որպես նման եռանկյունների համապատասխան տարրեր, բանաձևը նրա համար դառնում է գուտ անգիր արած տեքստ:

• Գումարման և հակադարձման շփոթություն. բարակ ոսպնյակի բանաձևում $\left(\frac{1}{F} = \frac{1}{d} + \frac{1}{f}\right)$ աշակերտները հաճախ կատարում են կոպիտ մաթեմատիկական սխալ՝ ենթադրելով, որ $F = d + f$: Սա վկայում է այն մասին, որ նրանք չեն ընկալում բանաձևի հիմքում ընկած երկրաչափական օպտիկական ուժի $\left(D = \frac{1}{F}\right)$ և հեռավորությունների հակադարձ կապը:

• Կառուցման և հաշվարկի անհամապատասխանություն. հաճախ աշակերտը գծագրում ստանում է մեծացած պատկեր, սակայն հաշվարկի արդյունքում ստանում է փոքրացած պատկեր (կամ հակառակը) և չի նկատում այդ հակասությունը: Սա երկրաչափական պատկերի և թվային արդյունքի միջև կապի բացակայության հետևանք է:

➤ **Հաղթահարման մեթոդական հնարներ:**

Այստեղ արդյունավետ է «Գծագրից դեպի բանաձև» անցումը:

1. Նմանության ակնառու ապացույց. կարելի է ոսպնյակի գծագրի վրա գունավոր մատիտներով առանձնացնել այն երկու եռանկյունները, որոնց նմանությունից բխում է խոշորացման բանաձևը: Սա օգնում է աշակերտին տեսնել «երկրաչափությունը ֆիզիկայի ներսում»:

2. Թվային և երկրաչափական մոդելավորում. կարելի է առաջադրել խնդիրներ, որտեղ նախ պետք է կատարել կառուցումը վանդակավոր թղթի վրա (պահպանելով մասշտաբը), իսկ հետո ստացված արդյունքը ստուգել բանաձևով: Երբ աշակերտը տեսնում է, որ քանոնով չափված հեռավորությունը համընկնում է հաշվարկածի հետ, նրա մոտ ձևավորվում է վստահություն և՛ մաթեմատիկական ապարատի, և՛ ֆիզիկական օրենքի նկատմամբ:

Այսպիսով, բարակ ոսպնյակների թեման դառնում է լավագույն հարթակը՝ ցույց տալու համար, որ երկրաչափական նմանության տեսությունը ոչ թե ինքնանպատակ է, այլ հզոր գործիք իրական աշխարհի օբյեկտները չափելու և կանխատեսելու համար:

Եզրակացություն

Սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից իրականացված երկրաչափական և օպտիկական տիպային սխալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել հետևյալ հիմնարար եզրահանգումները.

1. **Կոգնիտիվ տրանսֆերի օրինաչափությունը.** հաստատվեց այն թեզը, որ ֆիզիկայի «Օպտիկա» բաժնում աշակերտների թույլ տված սխալների զգալի մասը ոչ թե ֆիզիկական օրենքների չիմացության, այլ երկրաչափական պատկերացումների թերի ձևավորման արդյունք է: Երկրաչափական «կադապարված» մտածողությունը, որը սահմանափակվում է միայն ստանդարտ դիրքով պատկերված գծագրերով, ուղղակիորեն խոչընդոտում է ֆիզիկական երևույթների ճիշտ մոդելավորմանը::

2. **Սխալների համակարգային բնույթը.** բացահայտվեց, որ ուղղահայացության, համաչափության և նմանության երկրաչափական հասկացությունները օպտիկայում տրանսֆորմացվում են կայուն սխալների խմբերի: Անկման անկյան սխալ չափումը, հայելում պատկերի շեղված տեղադրումը կամ ոսպնյակի խոշորացման սխալ հաշվարկը ունեն ընդհանուր մեթոդական արմատ՝ արատրակտ մաթեմատիկական գործիքը կիրառական միջավայրում օգտագործելու անկարողությունը:

3. **Միջառարկայական կապերի արդյունավետությունը.** հետազոտությունը ցույց տվեց, որ սխալների շտկման առավել արդյունավետ ճանապարհը ոչ թե ֆիզիկական բանաձևերի կրկնությունն է, այլ նպատակային երկրաչափական «նախավարժանքների» ներմուծումը: Ուսուցման զուգահեռված մոտեցումը, որտեղ շեշտը դրվում է գծագրի կառուցողական ճշգրտության և տրամաբանական հիմնավորման վրա, թույլ է տալիս ոչ միայն նվազեցնել սխալների քանակը, այլև բարձրացնել սովորողների կողմից երևույթի էության գիտակցված ընկալումը:

Ամփոփելով արձանագրում ենք, որ երկրաչափական և օպտիկական պատկերացումների փոխկապակցված զարգացումը համահունչ է ժամանակակից կրթական չափորոշիչների պահանջներին և նպաստում է աշակերտների մոտ համակարգային մտածողության ձևավորմանը: Կարծում ենք՝ մեր կողմից առաջարկված մեթոդական հնարների համակարգը կարող է գործնական հիմք հանդիսանալ ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչների համար՝ դասապրոցեսի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-110>

Գրականություն

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, ՀՀ Կառավարության որոշում N 136-Ն, 04 փետրվար 2021:
2. Ղազարյան Է., Դպրոցական ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայի ընտրովի հարցեր, Երևան, «Էդիթ Պրինտ», 2009, 308 էջ:
3. Перышкин А. В. Курс физики. В 3-х томах. Том 1, Москва: Просвещение, 2013. 192 стр.
4. Погорелов А. В. Геометрия: Учебник для 7-11 классов, Москва: Просвещение, 2014. 383 стр.
5. Douady R. Jeux de cadres et dialectique outil-objet. Recherches en Didactique des Mathématiques, Vol. 7.3, 1986, pp. 5-31.
6. Van Hiele P. M., Structure and Insight: A Theory of Mathematics Education, Orlando: Academic Press, 1986, 248 p.

Взаимосвязанное развитие геометрических и оптических представлений: диагностика и исправление типичных ошибок

*Манукян Вардан,
Никогосян Гагик*

Резюме

***Ключевые слова:** межпредметные связи, когнитивный трансфер, построение образов, методика обучения, образование, знания*

В рамках данного исследования нами проведен комплексный анализ когнитивных проблем, возникающих в точках соприкосновения курсов геометрии и физики в общеобразовательной школе. Предметом исследования являются типичные ошибки учащихся в разделе «Геометрическая оптика», которые мы рассматриваем как следствие некорректного трансфера математических знаний. В ходе исследования мы поставили задачу выявить те геометрические заблуждения, которые приводят к неудачам при решении оптических задач, и разработать методические приемы для их преодоления. Применяя методы диагностики типичных ошибок и моделирования «визуальных ловушек», мы выявили прямое влияние трудностей учащихся, связанных с построением углов, симметрией и теорией подобия, на изображение хода лучей и характеристику изображений.

Научно-методическая новизна работы заключается в предложенной нами «трансферной модели», в рамках которой оптическая ошибка рассматривается не как отдельное физическое упущение, а как результат неправильного проектирования геометрического инструментария. Нами подтверждено, что геометрическое «стандартизированное» мышление, обычно ограничивающееся чертежами в горизонтальном положении, является основным источником ошибок в оптике. Результаты исследования позволяют нам констатировать, что успех в темах, касающихся тонких линз и зеркал, обусловлен не механическим воспроизведением формул, а устойчивостью графико-конструкторских навыков. Обосновано, что целевые геометрические упражнения, выполняемые до введения физического закона, существенно снижают вероятность возникновения типичных ошибок, способствуя формированию системного мышления и компетенций, определенных предметными стандартами.

**Interconnected Development of Geometric and Optical Representations:
Diagnosis and Correction of Typical Errors**

*Manukyan Vardan,
Nikoghosyan Gagik*

Summary

***Key words:** interdisciplinary links, cognitive transfer, image construction, teaching methodology, education, knowledge*

Within the scope of this research, we have conducted a comprehensive analysis of the cognitive problems arising at the intersection of geometry and physics courses in general education schools. The subject of the study is the typical errors made by students in the "Geometric Optics" section, which we have viewed as a consequence of incorrect transfer of mathematical knowledge. During the research, we aimed to identify the geometric misconceptions that lead to failures in solving optical problems and to develop methodological techniques for overcoming them. By applying methods for diagnosing typical errors and modeling "visual traps," we have identified the direct impact of students' difficulties related to angle construction, symmetry, and similarity theory on the path of light rays and the characterization of images.

The scientific and methodological novelty of this study lies in the proposed "transfer model," according to which an optical error is interpreted not as an isolated physical omission, but rather as the consequence of the incorrect projection or application of a geometric tool. We have confirmed that geometric "standardized" thinking, which is usually limited to diagrams depicted in a horizontal position, is the primary source of errors in optics. The results of the research allow us to state that success in topics involving thin lenses and mirrors is determined not by the mechanical reproduction of formulas, but by the stability of graphic-constructive skills. We have substantiated that targeted geometric exercises performed prior to the introduction of a physical law significantly reduce the likelihood of typical errors, contributing to the formation of systemic thinking and the competencies defined by subject standards.

**Ներկայացվել է 26. 04. 2026 թ.
Գրախոսվել է 13. 04. 2026 թ
Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.**

**Տիպային սխալների վերլուծությունը հանրահաշվական
ձևափոխություններում. ԹԱԲ-ից մինչև ֆիզիկական սահմանափակումներ***

*Նիկողոսյան Գագիկ,
Մանուկյան Վարդան*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-118>

Հանգուցային բառեր. նույնականություն, կողմնակի արմատ, անընդհատության խզում, մոդելավորում, միջառարկայական կապեր, կրթություն

Նախաբան

Բնագիտամաթեմատիկական կրթության ժամանակակից փուլում առանցքային խնդիրներից մեկը աշակերտների կողմից ուսումնական նյութի ֆորմալ յուրացումն է, որտեղ մաթեմատիկական գործիքակազմը դիտարկվում է որպես մաքուր ավգործիքների հավաքածու՝ գուրկ տրամաբանական և բովանդակային սահմանափակումներից: Այս հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրահաշվական ձևափոխությունների փուլում թույլ տրված անգոյվ վերաբերմունքը թույլատրելի արժեքների բազմության (ԹԱԲ) նկատմամբ հանգեցնում է շղթայական սխալների թե՛ մաթեմատիկայում, թե՛ ֆիզիկայում: Ըստ Լ. Ս. Վիգոտսկու «Մտածողություն և լեզու» աշխատության մեջ զարգացրած թեզի՝ գիտական հասկացությունների ձևավորումը չի կարող սահմանափակվել միայն բառային կամ սիմվոլիկ յուրացմամբ. այն պահանջում է գիտակցված անցում ներքին տրամաբանական կառուցվածքին [2]: Երբ աշակերտը մեխանիկորեն կիրառում է բանաձևը՝ առանց հասկանալու դրա գործողության տիրույթը, տեղի է ունենում հենց այդ բովանդակային խզումը, ինչի մասին խստորեն զգուշացնում էր նաև Լ. Լանդաուն՝ քննադատելով «մաթեմատիկական ֆորմալիզմը», որը կտրված է ֆիզիկական իրականությունից և երևույթի էությունից [5]:

Հետազոտության նպատակն է ցույց տալ, որ մաթեմատիկական ԹԱԲ-ը և ֆիզիկական մոդելի կիրառելիության սահմանները նույն տրամաբանական համակարգի երկու կողմերն են: Մեթոդական տեսանկյունից խնդիրը բարդանում է նրանով, որ գործող առարկայական չափորոշիչներում չնայած շեշտադրվում է կարողունակահեն մոտեցումը, նախատեսված անցումը թվային արտահայտություններից դեպի տառային ձևափոխություններ հաճախ կատարվում է՝ առանց բավարար ուշադրություն դարձնելու «նույնականության» գաղափարին: Ինչպես նշում է Ա. Պ. Կիսելյովը, մաթեմատիկական ցանկացած ձևափոխություն պետք է լինի դարձելի [3], սակայն գործնականում մենք հաճախ առերեսվում ենք իրավիճակների, երբ, օրինակ, հավասարումներում և անհավասարումներում ԹԱԲ-ի անտեսումը բերում է կողմնակի արմատների ի հայտ գալուն: Այս գործընթացում հատկապես կարևոր է եվրոպական դիդակտիկայի ներկայացուցիչ Գայ Բրուստյի «դիդակտիկական պայմանագրի» տեսությունը, համաձայն որի՝ աշակերտը հաճախ փորձում է բավարարել ուսուցչի սպասելիքները՝ կիրառելով

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԳԳԿ-ի ֆինանսական աջակցությամբ՝ 25RG-5C032 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

հայտնի բանաձևը, նույնիսկ եթե դրա կիրառման պայմանները խախտված են [8]:

Աշխատանքում շեշտադրվում է այն մոտեցումը, որ հավասարումների և անհավասարումների լուծման ժամանակ ԹԱԲ-ի վերլուծությունը պետք է դիտարկել ոչ թե որպես լրացուցիչ քայլ, այլ որպես լուծման ավգործիքի անբաժանելի մաս: Ըստ Ջ. Պոլայի՝ խնդիրը լուծված համարելու համար անհրաժեշտ է կատարել արդյունքների քննադատական վերլուծություն և ստուգել դրանց իրական լինելը [7]: Եթե հավասարման դեպքում կողմնակի արմատը կարելի է հեռացնել ստուգման միջոցով, ապա անհավասարումների պարագայում, որպես կանոն, սխալն անդառնալի է դառնում: Նմանատիպ խնդիրներ են առաջանում նաև ֆիզիկայում, որտեղ մաթեմատիկական ֆունկցիայի ԹԱԲ-ին գումարվում է մեծությունների ֆիզիկական դրական լինելու պայմանը կամ պրոցեսի անընդհատությունը: Ռ. Ֆեյնմանը իր դասախոսություններում շեշտում էր, որ ֆիզիկական մաթեմատիկա չէ, այն ունի իր սեփական տրամաբանությունը, որտեղ բանաձևը միայն նկարագրության լեզու է [1]: Այսպիսով, Ա. Գ. Մորդկովիչի և Պ. Վ. Սեմյոնովի կողմից նկարագրված հանրահաշվական ստանդարտ մեթոդների կիրառումը [6] պետք է մշտապես գուգորդվի Ժան Պիաժեի կողմից առաջ քաշված կոնստրուկտիվիստական մոտեցմամբ [9], որտեղ սովորողը ոչ թե մեխանիկորեն վերարտադրում է բանաձևը, այլ կառուցում է դրա իմաստային դաշտը:

Այս համատեքստում աշխատանքի գիտամեթոդական նորույթը հանրահաշվական ձևափոխությունների նույնականության պահպանման և ֆիզիկական մոդելավորման սահմանափակումների դիդակտիկական միասնության հիմնավորման մեջ է: Հնդվածում առաջ է քաշվում «ֆունկցիոնալ-բովանդակային ԹԱԲ»-ի հայեցակարգը, որը թույլ է տալիս մաթեմատիկական ձևական ապարատը դիտարկել ոչ թե որպես ինքնաբավ համակարգ, այլ որպես ֆիզիկական իրականության աղեկվատ արտապատկերման գործիք: Հայեցակարգային այս մոտեցման շրջանակներում առանձնահատուկ կարևորվել է մաթեմատիկական ձևափոխությունների ժամանակ առաջացող տրամաբանական «խզումների» և ֆիզիկական համակարգերի «ֆազային անցումների» միջև առկա մեթոդաբանական գուգահեռների վերհանումը: Նման գուգահեռների վերլուծությունը հնարավորություն է տալիս կանխատեսել և կանխարգելել սովորողների կողմից սխալները դեռևս մոդելավորման փուլում, քանի որ հաճախ աշակերտը, տիրապետելով անալիտիկ ձևափոխություններին, դառնում է բանաձևի «գերին» կորցնելով կապը իրական երևույթի հետ:

Անալիտիկ ձևափոխությունների ոչ համարժեքությունը

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում ուսումնական գործընթացը կառուցված է աստիճանական բարդացման սկզբունքով՝ թվային արտահայտություններից դեպի տառային ձևափոխություններ, ապա՝ հավասարումներ և անհավասարումներ: Սակայն այս անցումային փուլում հաճախ անտեսվում է այն հանգամանքը, որ ցանկացած հանրահաշվական ձևափոխություն պետք է լինի նույնական իր թույլատրելի արժեքների բազմության (ԹԱԲ) ներսում: Ձևափոխության մեխանիկական կիրառումը՝ առանց դրա տիրույթի վերահսկման, հանգեցնում է համարժեքության խախտման, ինչն էլ իր հերթին հիմք է դառնում կայուն և տիպային սխալների ձևավորման համար:

Նմանատիպ սխալների շարքում իր տարածվածությամբ առանձնանում է ռացիոնալ արտահայտությունների պարզեցման ընթացքում ԹԱԲ-ի անհարկի ընդլայնումը,

ինչը հատկապես ակնառու է դառնում կոտորակների կրճատման ժամանակ: Երբ աշակերտը կատարում է $\frac{f(x) \cdot h(x)}{g(x) \cdot h(x)} = \frac{f(x)}{g(x)}$ ձևափոխությունը, նա հաճախ այն ըն-

կալում է որպես բացարձակ նույնական ձևափոխություն՝ անտեսելով, որ ստացված նոր արտահայտությունը համարժեք է ելակետայինին միայն $h(x) \neq 0$ լրացուցիչ պայմանի պահպանման դեպքում:

Այս երևույթի բացասական հետևանքները տարբեր կերպ են դրսևորվում՝ կախված լուծվող առաջադրանքի տեսակից: Հավասարումների պարագայում, օրինակ՝ $\frac{x^2 - 4}{x - 2} = 4$ դեպքում [4], հավասարման ձախ մասի կոտորակի մեխանիկական կրճատումը հանգեցնում է $x + 2 = 4$ գծային հավասարմանը, որի միակ լուծումը $x = 2$ արժեքն է: Թեև այս փուլում արձանագրվում է մեթոդական սխալ, այն դեռևս «վերահսկելի» է աշակերտի համար, քանի որ ստացված արմատի ստուգումը սկզբնական (ելակետային) հավասարման մեջ անմիջապես ի հայտ է բերում հայտարարի գրո դառնալու փաստը, ինչը թույլ է տալիս հաշվի չառնել ստացված կողմնակի արմատը:

Սակայն համարժեքության խախտման վտանգը կարող է անդառնալի լինել անհավասարումների լուծման ընթացքում, որտեղ ստուգման մեթոդը գործնականում կիրառելի չէ: Օրինակ, դիտարկելով նույն արտահայտությունը անհավասարման տեսքով՝ $\frac{x^2 - 4}{x - 2} \leq 5$, հեշտ է նկատել, որ ԹԱԲ-ի նախնական սահմանման անտեսումը և

անհավասարման ձախ մասի կոտորակի մեխանիկական կրճատումը բերում է $x + 2 \leq 5$ պարզեցմանը, որի լուծումը հանդիսացող $(-\infty; 3]$ միջակայքը պարունակում է սկզբնական անհավասարման համար անթույլատրելի $x = 2$ կետը: Քանի որ անհավասարման պատասխանը բազմություն է, աշակերտը զրկված է պատասխանի մեջ ներառված անթիվ կետերը անհատապես ստուգելու հնարավորությունից: Արդյունքում հանգում ենք վերջնական սխալ պատասխանի, քանի որ ճշմարիտ պատասխանը պետք է լինի $(-\infty; 2) \cup (2; 3]$ բազմությունը:

Այսպիսով, ԹԱԲ-ի ընդլայնումը կոտորակների կրճատման ժամանակ ոչ թե պարզապես տեխնիկական բացթողում է, այլ տրամաբանական սխալ, որը խաթարում է լուծման ողջ ընթացքը՝ հատկապես այնտեղ, որտեղ արդյունքների ստուգման պարզ մեխանիզմները չեն գործում:

Այս տրամաբանական շղթան էլ ավելի է բարդանում, երբ անցում ենք կատարում լոգարիթմական ձևափոխություններին, որտեղ ԹԱԲ-ի տրանսֆորմացիան տեղի է ունենում աննկատ, բայց վճռորոշ հետևանքներով: Որպես այդպիսին, առանձնահատուկ ուշադրության է արժանի լոգարիթմների գումարից արտադրյալի անցումը՝ $\log_a f(x) + \log_a g(x) = \log_a (f(x) \cdot g(x))$: Այստեղ մենք գործ ունենք ԹԱԲ-ի «կույր» ընդլայնման հետ, որը հաճախ դուրս է մնում սովորողի տեսողաշտից:

Եթե սկզբնական արտահայտության մեջ գոյության պարտադիր պայմանը $f(x) > 0$ և $g(x) > 0$ խիստ սահմանափակումներն են, ապա ձևափոխված տարբերակում լոգարիթմական ֆունկցիան սկսում է «գոյություն ունենալ» նաև այնտեղ,

որտեղ երկու ֆունկցիաներն էլ բացասական են ($f(x) < 0$ և $g(x) < 0$), քանի որ նրանց արտադրյալը դառնում է դրական: Այս անցումը ծնում է մի իրավիճակ, երբ մաթեմատիկական ապարատը սկսում է գեներացնել լուծումներ, որոնք սկզբնական հավասարման կամ անհավասարման հետ որևէ տրամաբանական կապ չունեն:

Որպես ասվածի հիմնավորում դիտարկենք $\log_6(x-1) + \log_6(x-2) = 1$ հավասարումը [4]: Ստանդարտ ալգորիթմով առաջնորդվող աշակերտը, միավորելով լոգարիթմները, ի վերջո ստանում է $(x-1)(x-2) = 6$ քառակուսային հավասարումը, որի արմատներն են՝ $x_1 = 4$ և $x_2 = -1$: Ելակետային հավասարման մեջ ստացված արմատների ստուգման ժամանակ ակնհայտ է դառնում, որ $x_2 = -1$ արմատը կողմնակի է և այն չպետք է հաշվի առնել:

Անհավասարման դեպքում խնդիրը ստանում է այլ որակ: Ստանդարտ ալգորիթմով առաջնորդվող աշակերտը, դիտարկելով $\log_6(x-1) + \log_6(x-2) \leq 1$ ելակետային անհավասարումը, միավորելով լոգարիթմները, ի վերջո ստանում է $(x-1)(x-2) \leq 6$ քառակուսային անհավասարումը: Առանց ԹԱԲ-ի նախնական և խիստ սահմանման, աշակերտը որպես պատասխան կներկայացնի $x \in [-1; 4]$ բազմությունը, որի մի զգալի մասը՝ $[-1; 2]$ հատվածը բացարձակապես կապ չունի ելակետային $\log_6(x-2)$ ֆունկցիայի որոշման տիրույթի հետ:

Այսպիսով, եթե հավասարումների լուծման ընթացքում սխալը կարելի է դիտարկել որպես «աշխատանքային» և շտկելի, ապա անհավասարումներում այն վերածվում է հայեցակարգային ձախողման: Սա ևս մեկ անգամ հաստատում է Ջ. Պոյայի այն միտքը, որ մաթեմատիկական խնդրի լուծումը ոչ թե բանաձևերի հաջորդականություն է, այլ տրամաբանական պայմանների անընդհատ վերահսկողություն [7]: Երբ ձևափոխությունը կատարվում է «մեխանիկորեն», ԹԱԲ-ը դադարում է լինել պաշտպանիչ պատնեշ, իսկ վերջինիս անտեսումը դառնում է սխալների հիմնական պատճառ:

Ստդեալվորման սահմանափակումները և ֆիզիկական իմաստի տիրույթը փոփոխական պարամետրերով պրոցեսներում

Ֆիզիկական խնդիրների լուծման գործընթացում մաթեմատիկական ապարատը հանդես է գալիս որպես երևույթի նկարագրության լեզու, սակայն, ինչպես նշում էր Ռ. Ֆեյնմանը, այդ լեզուն ունի իր սեփական տրամաբանությունը, որը միշտ չէ, որ համընկնում է ֆիզիկական օբյեկտի վարքագծի հետ [1]: Այստեղ է, որ հողվածում առաջ քաշված «ֆունկցիոնալ-բովանդակային ԹԱԲ»-ի հայեցակարգը ստանում է գործնական նշանակություն: Այն ենթադրում է, որ ցանկացած մաթեմատիկական արդյունք պետք է անցնի ֆիզիկական «ֆիլտրացիա»՝ հաշվի առնելով մեծությունների բնույթը և պրոցեսի կիրառելիության սահմանները:

➤ Մաթեմատիկական «խզումները» և ֆիզիկական ֆազային անցումները:

Մեր կողմից տրամաբանական խզումների և ֆազային անցումների միջև առանձնահատուկ կարևորված զուգահեռը ամենից ակնառու դրսևորվում է ջերմային երևույթների մոդելավորման մեջ: Դիտարկենք նյութի տաքացման գործընթացը նկարագրող $Q = mc\Delta t$ բանաձևը: Մաթեմատիկորեն սա գծային ֆունկցիա է, որտեղ Q -ն և

Δt -ն ուղիղ համեմատական են: Սակայն ֆիզիկական իրականության մեջ գոյություն ունեն կրիտիկական կետեր (հալման կամ եռման ջերմաստիճան), որտեղ մաթեմատիկական այս ֆորմալիզմը դադարում է գործել:

Այստեղ տեղի է ունենում այն, ինչը մենք անվանում ենք «բովանդակային խզում»: Աշակերտը, տիրապետելով բանաձևին, փորձում է հաշվել ջերմաքանակը մի տիրույթում, որտեղ ջերմաստիճանը չի փոխվում ($\Delta t = 0$), բայց էներգիա շարունակվում է հաղորդվել: Առանց գրաֆիկական մոդելի և ֆազային անցման գիտակցման, աշակերտը դառնում է բանաձևի «գերին»՝ ստանալով $Q = 0$, ինչը հակասում է երևույթի էությունը: Սա հենց այն կոգնիտիվ սխալն է, որը հնարավոր է կանխարգելել, եթե մաթեմատիկական հավասարումը դիտարկվի իր կիրառելիության «կոնտեքստային ԹԱԲ»-ի ներսում:

➤ **Պարամետրական կախվածությունների «ծուղակները».** *Օհմի և Ջոու-Լենցի օրենքները:*

Ֆիզիկական մոդելավորման մեջ նա մեկ տիպային խնդիր է առաջանում, երբ մաթեմատիկական ձևափոխությունը թվում է նույնական, բայց փոխում է պրոցեսի ֆիզիկական իմաստը: Դասական օրինակ է հաղորդչում անջատված ջերմաքանակի որոշումը.

1. $Q = I^2 R t$,

2. $Q = \frac{U^2}{R} t$:

Մաթեմատիկորեն այս երկու բանաձևերը համարժեք են՝ հաշվի առնելով Օհմի օրենքը ($I = U/R$): Սակայն, ըստ Լ. Լանդաուի քննադատած «Ֆորմալիզմի» [5], աշակերտը հաճախ չի ընկալում, թե որ պարամետրն է տվյալ համակարգում հաստատուն: Եթե հաղորդիչները միացված են հաջորդաբար ($I = const$), ապա $Q \propto R$, իսկ եթե գուգահեռ ($U = const$), ապա $Q \propto \frac{1}{R}$:

Մաթեմատիկական ձևափոխությունը՝ $I^2 R = \frac{U^2}{R}$, ճիշտ է, բայց եթե աշակերտը

չի սահմանում իրավիճակի ֆունկցիոնալ ԹԱԲ-ը (պարամետրերի հաստատուն լինելու պայմանը), նա հանգում է սխալ եզրակացության, թե դիմադրության մեծացումը միշտ բերում է ջերմաքանակի աճի (կամ նվազման):

➤ **Ֆիզիկական մեծությունների սահմանափակումները որպես «ներքին ԹԱԲ»:**

Ինչպես նշել էինք նախաբանում, ըստ **ժան Պիաժեի**, սովորողը պետք է կառուցի իմաստային դաշտը [9]: Ֆիզիկայում դա նշանակում է մաթեմատիկական լուծումը ստուգել ֆիզիկական գոյության պայմաններով:

• **ժամանակի ոչ բացասական լինելը:** Քառակուսային հավասարման լուծման արդյունքում ստացված $t = -5$ վայրկյանը մաթեմատիկորեն անթերի է, սակայն ֆիզիկական իրականության մեջ այն հաճախ գտնվում է դիտարկվող պրոցեսի սկզբնակետից դուրս (այսինքն՝ ֆիզիկորեն գտնվում է «ԹԱԲ-ից դուրս»): Սա աշակերտից պահանջում է գիտակցված ընտրություն՝ մաթեմատիկական լուծումների բազմությունից գատելու ֆիզիկական իմաստ ունեցող արժեքը:

• **Բացարձակ ջերմաստիճանի սահմանը:** Իդեալական գազի վիճակի հավասար-

ման ($PV = nRT$) կամ ջերմային մեքենաների ՕԳԳ-ի հաշվարկման ժամանակ Կելվինի սանդղակը դնում է սկզբունքային արգելք՝ $T \geq 0$ Կ: Եթե մաթեմատիկական ձևափոխությունների արդյունքում (օրինակ՝ ջերմային հաշվեկշռի հավասարումը լուծելիս) ստացվում է բացասական արժեք, դա ոչ թե պարզապես «թիվ» է, այլ ազդանշան այն մասին, որ կա՛մ հաշվարկն է սխալ, կա՛մ ընտրված մոդելը տվյալ պայմաններում գոյություն ունենալ չի կարող:

• **Լույսի արագության սահմանափակումը:** Դինամիկայի խնդիրներում արագության համար ստացված ցանկացած արժեք, որը գերազանցում է $c \approx 3 \cdot 10^8$ մ/վ-ը, ազդանշան է այն մասին, որ կիրառված մոդելը (նյութոսկան մեխանիկա) տվյալ տիրույթում այլևս ադեկվատ չէ: Այստեղ մաթեմատիկական ԹԱԲ-ը վերածվում է մեթոդաբանական սահմանի, որից այն կողմ անհրաժեշտ է անցում կատարել ռելյատիվիստական ֆիզիկայի տիրույթ:

Այսպիսով, մեր կողմից առաջարկվող «դիդակտիկական միասնությունը» պահանջում է, որ աշակերտը ոչ թե լուծի հավասարումը և հետո «հարմարեցնի» այն ֆիզիկային, այլ լուծման յուրաքանչյուր քայլում գիտակցի ֆիզիկական սահմանափակումը որպես բովանդակային-մաթեմատիկական հավելյալ արգելք: Սա թույլ է տալիս հաղթահարել Գայ Բրոուսի նկարագրած «դիդակտիկական պայմանագիրը» [8], որտեղ աշակերտը պարզապես բավարարում է ուսուցչի սպասելիքը՝ թիվ ստանալով, և անցնել իրական գիտական մտածողության, որտեղ թիվը երևույթի արտացոլումն է:

Եզրակացություն

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ մաթեմատիկական և ֆիզիկական կրթության միջև առկա «խզումը» հիմնականում հետևանք է ԹԱԲ-ի և մոդելի կիրառելիության սահմանների անջատ դիտարկման: Հոդվածում հիմնավորված «ֆունկցիոնալ-բովանդակային ԹԱԲ»-ի ներդրումը թույլ է տալիս ձևավորել սովորողի վերլուծական մտածողությունը հետևյալ ուղղություններով.

1. **մաթեմատիկական զգոնություն.** ցանկացած ձևափոխություն պետք է ուղեկցվի ԹԱԲ-ի փոփոխության մշտական վերահսկողությամբ՝ խուսափելու համար ոչ համարժեք ձևափոխություններից և կողմնակի արմատներից,

2. **ֆիզիկական ադեկվատություն.** մաթեմատիկական ապարատը պետք է ծառայի ֆիզիկական իրականությանը՝ հաշվի առնելով մեծությունների բնույթից բխող սահմանափակումները,

3. **մեթոդաբանական միասնություն.** տրամաբանական «խզումների» և ֆիզիկական «ֆազային անցումների» միջև տարված զուգահեռը հնարավորություն է տալիս ստեղծելու ուսուցման միասնական մոդել, որտեղ սովորողը տեսնում է բանաձևի հետևում թաքնված իրական պրոցեսը:

Համոզված ենք, որ վերջնարդյունքում, նման մոտեցումը նպաստելու է ոչ թե ֆորմալ գիտելիքի կուտակմանը, այլ գիտակցված կարողունակությունների ձևավորմանը, ինչը ժամանակակից բնագիտական կրթության գլխավոր նպատակն է:

Գրականություն

1. Ֆեյնման Ռ., Ֆիզիկական օրենքների բնույթը, Երևան, «Զանգակ» հրատարակչություն, 2021, 240 էջ:
2. Выготский Л. С. Мышление и речь. Москва, Соцэкгиз. 1934, 324 с.
3. Киселев А. П., Алгебра. Ч II. Москва: ФИЗМАТЛИТ. 2005, 248 с.
4. Куланин Е. Д., Норин В. П., Федин С. Н., Шевченко Ю. А. 3000 конкурсных задач по математике. 7-11 классы. Москва: Айрис-пресс. 2003, 624 с.
5. Ландау Л. Д., Лифшиц, Е. М. Курс теоретической физики. Том 1. Механика. Москва: Наука. 1988, 216 с.
6. Мордкович А. Г., Семенов П. В. Алгебра и начала математического анализа (профильный уровень). Часть 1. Учебник. Москва, Мнемозина. 2009, 424 с.
7. Пойа Д. Как решать задачу? Москва, Учпедгиз. 1959. 208 с.
8. Brousseau G. Theory of Didactical Situations in Mathematics, Kluwer Academic Publishers. 1997. 304 p.
9. Piaget J. Genetic Epistemology. Columbia University Press. 1970, 84 p.

Анализ типичных ошибок в алгебраических преобразованиях: от ОДЗ до физических ограничений

***Никогосян Гагик,
Манукян Вардан***

Резюме

***Ключевые слова:** тождество, посторонний корень, разрыв непрерывности, моделирование, межпредметные связи, образование*

В статье рассматривается одна из важнейших проблем естественно-математического образования - формальное усвоение учебного материала и пути его преодоления. В работе подчеркивается, что игнорирование области допустимых значений (ОДЗ) в процессе алгебраических преобразований может привести не только к математическим ошибкам, но и к искаженному восприятию физической реальности.

Научно-методическая новизна работы заключается в выдвигании концепции «функционально-содержательной ОДЗ», объединяющей идентичность формального математического аппарата и ограничения физического моделирования. В статье подробно анализируются типичные ошибки, возникающие вследствие игнорирования ОДЗ, на примере дробных и логарифмических выражений. Показано, что если в уравнениях посторонние корни можно отсеять путем проверки, то в неравенствах нарушение равносильности приводит к необратимым потерям.

В физическом разделе обосновывается методологическая параллель между логическими «разрывами» и «фазовыми переходами» физических систем. На примерах закона Ома, тепловых явлений и фундаментальных констант (абсолютная температура, скорость света) демонстрируется, как область физического смысла выступает в роли естественного фильтра для математических решений. В работе обосновано, что анализ ОДЗ является не вспомогательным шагом, а неотъемлемым компонентом алгоритма решения. Такой подход позволяет учащемуся преодолеть формульный «формализм» и сформировать целостную научную картину явления.

Analysis of Typical Errors in Algebraic Transformations: From the Domain of Admissible Values to Physical Constraints

***Nikoghosyan Gagik,
Manukyan Vardan***

Summary

Key words: *identity, extraneous root, discontinuity, modeling, interdisciplinary connections, education*

The article examines one of the most critical issues in science and mathematics education: the formal assimilation of instructional material and the methods to overcome it. The study emphasizes that disregarding the domain of admissible values (DAV) during algebraic transformations can lead not only to mathematical errors but also to a distorted perception of physical reality.

The scientific and methodological novelty of the work lies in the introduction of the “functional-semantic DAV” concept, which integrates the identity of the formal mathematical apparatus with the constraints of physical modeling. The article provides detailed analysis of typical errors resulting from the neglect of the DAV, using examples of fractional and logarithmic expressions. It is demonstrated that while extraneous roots in equations can be eliminated through verification, the breach of equivalence in inequalities leads to irreversible losses.

In the physics section, a methodological parallel is established between logical “discontinuities” and the “phase transitions” of physical systems. Using examples such as Ohm’s law, thermal phenomena, and fundamental constants (absolute temperature, the speed of light), it is shown how the domain of physical meaning serves as a natural filter for mathematical solutions. The study substantiates that the analysis of the DAV is not a supplementary step but an essential component of the solution algorithm. This approach enables the learner to overcome formulaic “formalism” and construct a comprehensive scientific understanding of the phenomenon.

Ներկայացվել է 26. 04. 2026 թ.

Գրախոսվել է 13. 04. 2026 թ

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

Առաջանցիկ ուսուցում իրականացնելիս մաթեմատիկական որոշ պատկերացումների կիրառումը «Մեխանիկա»-ից առանձին դասաթեմաների դասավանդման ժամանակ

*Շատուրյան Արմեն,
Շահբազյան Անի*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-126>

Հանգուցային բառեր. ֆիզիկայի ուսուցում, դասավանդման մեթոդաբանական մոդելավածություն, գիտելիքների իմպլիցիտ տեղափոխում, մաթեմատիկական մոդելավորում, ասոցիատիվ-առաջանցիկ կապեր, կարողություններ

Նախաբան

Գիտության հարաճուն զարգացումը բերում է կրթական համակարգերի կատարելագործման անհրաժեշտության: Ընդ որում, փոփոխման ենթակա է լինում ոչ միայն ուսուցման գործընթացի բովանդակային բաղադրիչը, այլ նաև կազմակերպակառուցվածքային ձևը:

Ֆիզիկայի դասավանդումն անհրաժեշտ է կազմակերպել այնպիսի մեթոդաբանությամբ, որը թույլ կտա սովորողների մոտ ձևավորել գործնականում իրենց գիտելիքները կիրառելու հմտություններ ու կարողություններ:

Աշխատանքում, մասնանշելով տարբեր տարիքային խմբերին բնորոշ մաթեմատիկական պատրաստվածությունը, կոնկրետ օրինակների միջոցով ցույց է տրվել, թե ինչպես կարելի է ֆիզիկայի «Մեխանիկա» բաժնից տարբեր դասաթեմաներ ուսումնասիրելիս իրականացնել առաջանցիկ ուսուցում:

Մասնավորապես. ներկայացվել է ուսուցման տարբեր աստիճաններում տեսական նյութի բացատրման ժամանակ հանդիպող գրաֆիկական մի մեթոդի կիրառման դերը սովորողների գիտելիքների տեղափոխման գործընթացում:

Բացի այդ՝ որպես առաջանցիկ ուսուցման իրականացման մաթեմատիկական մոդելավորման միջոց՝ քննարկվել է զծային կապ արտահայտող բանաձևերում ֆիզիկական մեծության միջինը որոշող արտահայտության համընդհանուր մոտեցման կիրառումը:

Աշխատանքի արդիականությունը այն է, որ ցույց է տրվել, թե ինչպես կարելի է մաթեմատիկական պատկերացումները ծառայեցնել որպես առաջանցիկ ուսուցման իրականացման միջոց:

Այդ նպատակով կոնկրետ օրինակների միջոցով ցույց է տրված, թե ինչպես որոշ մեխանիկական դասաթեմաների ուսուցման ժամանակ կարելի է իրականացնել առաջանցիկ ուսուցում մաթեմատիկական մոդելների կիրառման հենքի վրա:

Առաջանցիկ ուսուցման ժամանակ ասոցիատիվ-առաջանցիկ կապերի հետևողական կիրառումը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը: Ի տարբերություն միջառարկայական և ներառարկայական կապերի, որոնցում գիտելիքների տեղափոխությունը կատարվում է նախորդ փորձից ընթացիկ ուսումնառություն և ունի էքսպլիցիտ բնույթ, առաջանցիկ ուսուցման ժամանակ իրականացվում է գիտելիքների տեղափոխություն ընթացիկ ուսումնառությունից հետագա ուսումնառություն և ունի իմպլիցիտ (ոչ բացահայտ) բնույթ:

Ֆուլանդակություն

Հանրակրթական դպրոցում ֆիզիկայի ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկը սովորողների մոտ ֆիզիկական մտածողության և ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Դրա իրականացումը բարդ և տևական խնդիր է և ուսուցչից պահանջում է մեծ վարպետություն ու ջանք: Շատ կարևոր է, որ ուսուցիչը հստակ պատկերացնի այն ուղին, որով պետք է տանի իր աշակերտներին: Ֆիզիկայի դասավանդման մեթոդիկայում այդ խնդրի իրականացման ուղղությամբ կատարած ամենահաջող քայլերը վերաբերում են այն տեխնոլոգիաներին, որոնք ուղղված են ուսուցման գործընթացում դասավանդման մեթոդաբանական ուղղվածության ուժեղացման և ուսուցանվող նյութը հիմնարար գաղափարների վրա կառուցելու սկզբունքի վրա: Վերջիններիս իրականացումը կարող է էապես նպաստել որակյալ ֆիզիկական կրթության ապահովելուն: Հասարակության զարգացման արդի փուլում ֆիզիկական կրթության արդիականացման հիմնական խնդիրները և ճանապարհը որոշվում են ոչ միայն շրջապատող աշխարհի մասին հաղորդած կոնկրետ գիտելիքներով, այլ նաև դրանց մեթոդաբանական հիմքերի ուսուցմամբ և մաթեմատիկական մոդելավորում իրականացնելու կոնկրետ կարողություններով ու հմտություններով:

Ֆիզիկական համակարգերի հետազոտման որակական մեթոդները թույլ են տալիս բարձրացնել ֆիզիկայի ընկալման մակարդակը, որը վերջին հաշվով հիմք է տարբեր ֆիզիկական պրոցեսների ընթացքի վերաբերյալ տեսական կանխատեսումներ անելու ընդունակությունները զարգացնելու համար: Սրա հիմքում էլ ընկած է առաջանցիկ ուսուցման գաղափարը:

Վերջին տարիներին Ա. Օստոյայանի կողմից բազմաթիվ հոդվածներում [1, 2, 3, 4, 5, 6, 7] առաջադրվել է առաջանցիկ ուսուցման իրականացման նոր մեթոդաբանություն:

[3] աշխատանքում առանձնացված են առաջանցիկ ուսուցման իրականացման հետևյալ ուղղությունները.

1. Առաջանցում ֆիզիկայի ընդհանուր տեսությունների, օրենքների, ընդհանուր մեթոդաբանական սկզբունքների և հիմնարար գաղափարների ուսումնասիրման ժամանակ:
2. Առաջանցում առանձին ֆիզիկական հասկացությունների և մեծությունների մեկնաբանման ժամանակ:
3. Առաջանցում հաշվման մաթեմատիկական մեթոդների կիրառման ժամանակ:
4. Անուղղակի (ինպլիցիտ) առաջանցում՝ պայմանավորված ոչ թե ծրագրով, այլ ուսուցման մեթոդիկայով:
5. Առաջանցում ուսուցանվող թեմաների վերաբերյալ խնդիրների լուծման նախապատրաստման մեջ:

Ֆիզիկայի մեթոդաբանական սկզբունքները հանդես են գալիս որպես համակարգաստեղծ տարրեր, որոնք ապահովում են տեսական գիտելիքների համակարգվածությունը, նրանց ներքին զարգացումը և ընդհանրացումը: Լրանց հիման վրա էլ ուսուցման ընթացքում հնարավոր է լինում գիտական աշխարհայացքի համակարգում ընդհանրացնել դպրոցականների գիտելիքները ֆիզիկայից:

Հայտնի է, որ խնդիրների լուծումը կարևոր տեղ է զբաղեցնում ֆիզիկայի ուսուցման գործընթացում: Այն դիտվում է, ոչ միայն տեսական նյութի կոնկրետ կիրառման հնարավորություն, այլ նաև սովորողների մոտ ֆիզիկական և մաթեմատիկական մոդելավորում իրականացնելու կարողությունների զարգացման միջոց: Ֆիզիկական

խնդիրների լուծումը լավագույն միջոց է սովորողների մոտ ֆիզիկական մտածողության և ստեղծագործական ունակությունների զարգացման համար:

Տեսական նյութի բացատրման ընթացքում առավելապես խնդիրների լուծման ժամանակ էական դեր է խաղում ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը:


Հաշվի առնելով սովորողների տարիքա-հոգեբանական առանձնահատկությունները, այդ թվում՝ մաթեմատիկական պատրաստվածությունը, որն ավելի զարգացած է ուսուցման երկրորդ աստիճանում, դասավանդողները սովորողների հետ դեռևս ուսուցման առաջին աստիճանում պետք է նշեն և քննարկեն այն բոլորը հնարավոր դեպքերը, որոնցում կարելի է կիրառել տվյալ տեսական նյութը, ինչը կապահովի ուսուցման շարունակականությունը [1]:

Օրինակ, ուսուցման առաջին աստիճանում ֆիզիկայի «Մեխանիկա» բաժինն ուսումնասիրելիս սովորողները, ծանոթանալով հավասարաչափ շարժման «Արագություն» և «Անցած ճանապարհ» ֆիզիկական մեծություններին, նկատում են, որ հավասարաչափ շարժվող մարմնի անցած ճանապարհի և ժամանակի կապը գծային է.

$$S = V \cdot t$$

Շարժման մասին տեղեկություններ կարելի է ստանալ նաև շարժման գրաֆիկից, որը թույլ է տալիս սովորողներին բացատրել գրաֆիկի տակ ընկած պատկերի ֆիզիկական իմաստը՝ կիրառելով ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական կապերը:

Օրինակ, հավասարաչափ շարժման արագության ժամանակից կախվածությունն արտահայտող գրաֆիկի միջոցով կարող ենք որոշել մարմնի անցած ճանապարհը կամայական ժամանակամիջոցում: Նկար 1-ում սովորագծված ուղղանկյան կողմերից մեկը թվապես հավասար է ժամանակին, իսկ մյուսը՝ արագությանը: Ուղղանկյան մակերեսը թվապես հավասար է այդ կողմերի արտադրյալին, որը տվյալ դեպքում հանդիսանում է մարմնի անցած ճանապարհը:












Նկար 1. Հավասարաչափ շարժման արագության կախումը ժամանակից արտահայտող գրաֆիկ

Ուսուցչին հայտնի է, որ հետագայում սովորողները պետք է հանդիպեն նմանատիպ իրադրությունների: Մասնավորապես հոսանքի ուժի (I) և ժամանակի (t) կախումը արտահայտող գրաֆիկի տակ ընկած մակերեսը թվապես հավասար է այդ ընթացքում հաղորդչով անցած լիցքին (q). $q = I \cdot t$:

Կամ այլ օրինակ. մեխանիկական աշխատանք թեման ուսումնասիրելիս, երբ քննարկվում է հաստատուն ուժի կատարած աշխատանքը, կառուցվում է $F = F(S)$

կախվածության գրաֆիկը, որի տակ ընկած պատկերի մակերեսը հավասար է աշխատանքին (A). $A = F \cdot S$:

Այսինքն՝ ստացվում է, որ երբ մի մեծություն հանդիսանում է միայնացից անկախ այլ մեծությունների արտադրյալ, ապա այդ անկախ մեծությունների միջև կախվածության գրաֆիկի տակ ընկած պատկերի մակերեսը թվապես հավասար է դրանց արտադրյալով որոշվող ֆիզիկական մեծությանը (նկար 2):

<i>Ուսուցման առաջին աստիճան</i>	<i>Ուսուցման երկրորդ աստիճան</i>	<i>Բուն</i>
 $S = V \cdot t$	 $S = \frac{1}{2} Vt = \frac{at^2}{2}$	 $S = \int_0^t V(t)dt$
 $A = F \cdot S$	 $A = \frac{F_1 + F_2}{2} \cdot S$	 $A = \int_0^S F(S)dS$
 $q = I \cdot t$	 $q = \frac{I_1 + I_2}{2} \cdot t$	 $q = \int_0^t I(t)dt$

Նկար 2. Անցած ճանապարհի, աշխատանքի և լիցքի որոշումը գրաֆիկական մեթոդով՝ ուսուցման տարբեր աստիճաններում

Մա հուշում է, որ այս դեպքում առաջանցիկ ուսուցումը պետք է կազմակերպել հետևյալ տրամաբանությամբ: Այն փաստը, որ արագության գրաֆիկի երկրաչափական մեկնաբանությունը, բացի այդպիսի կոնկրետ դրսևորումից, ունի նաև լայն դրսևորում, որն առկա է լինում տարբեր ֆիզիկական երևույթներ ու պրոցեսներ ուսումնասիրելիս: Այսինքն, այն ունի մեթոդաբանական նշանակություն:

Այժմ քննարկենք մաթեմատիկական ապարատի մի այլ դրսևորում, որը կարող է հանդիսանալ առաջանցիկ ուսուցման իրականացման նյութ:

Հայտնի է, որ ֆիզիկայի դպրոցական դասընթացին սովորողները ծանոթանում են այնպիսի մեծությունների, որոնց միջև տեղի ունի ուղիղ համեմատական կամ գծային կախվածություն:

Օրինակ. $V = V_0 + a \cdot t$, $F = k \cdot x$, $\varphi = \varphi_0 + \omega \cdot t$ և այլն:

Տարբեր խնդիրներ լուծելիս անհրաժեշտ է լինում գործ ունենալ այդ մեծությունների միջին արժեքների հետ: Դժվար չէ ցույց տալ, որ այդ դեպքերում միջին արժեքը որոշվում է որպես այդ մեծության արժեքների միջին թվաբանական: Այդ հանգամանքը թույլ է տալիս առաջանցիկ ուսուցման իրականացման նպատակով կատարել ընդհանրացումներ: Այն է, որ եթե գործ ունենք ֆիզիկական մեծության գծային կամ ուղիղ համեմատական կապերի հետ, ապա որպես նրանց միջին արժեք կարող ենք վերցնել միջին թվաբանականը:

Հավասարաչափ արագացող շարժումն ուսումնասիրելիս, որի դեպքում արագությունը ժամանակից կախված փոխվում է գծայնորեն, հայտնի է, որ միջին արագության սահմանումը կիրառելով ստացվում է $\bar{v} = \frac{V + V_0}{2}$ արտահայտությունը: Այսինքն՝ այն

ցանկացած ժամանակի միջակայքի համար հանդիսանում է սկզբնական և վերջնական արագությունների կիսագումար:

Հաշվի առնելով, որ դասընթացի ընթացքում նմանատիպ դրսևորումների օրինակներ կան հետագայում, ուսուցիչը կարող է անել ընդհանրացումներ՝ շեշտելով, որ երբ գործ ունենք ուղիղ կամ գծային համեմատականություն ֆունկցիոնալ կապերի հետ, ապա նրանց միջին արագության համար արդեն իսկ գոյություն ունի նմանատիպ մոտեցում: Այսինքն՝ այդ մեծության միջին արժեքը կարող է որոշվել որպես սկզբնական և վերջնական արժեքների միջին թվաբանական: Այս օրինակում որպես ասոցիատիվ դրսևորման նյութ հանդես են գալիս առաձգականության, շփման ուժերը, ինչպես նաև անկյունային արագությունը՝ հավասարաչափ շրջանագծային շարժման դեպքում:

Առաջանցիկ ուսուցում իրականացնելիս սխեմատիկորեն պատկերենք վերոնշյալ մոտեցումը (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Առաջանցիկ ուսուցման իրականացման տրամաբանական շղթան՝ ֆիզիկական մեծության միջին արժեքի որոշման դեպքում, երբ մեծությունների միջև առկա է գծային կապ

Ընթացիկ ուսուցման նյութ	Հետագա ուսումնառության նյութ
$V = V_0 + at$ $\bar{v} = \frac{V + V_0}{2}$	$F = k \cdot x$ ($\bar{F} = \frac{F_1 + F_2}{2} = \frac{kx_1 + kx_2}{2}$) ($\bar{\varphi} = \frac{\varphi_0 + \varphi}{2}$) $F_{2\varphi} = \mu \cdot N$ ($\bar{F}_{2\varphi} = \frac{F_{2\varphi 1} + F_{2\varphi 2}}{2}$) ($\mu = \text{const}$)

Առաջանցիկ ուսուցման վերոհիշյալ դրսևորումները հնարավորություն են տալիս ուսուցման գործընթաց ներդնել ուսուցիչների այն մեծ ռեզերվը, որը նրանք ունեն: Դա առաջին հերթին վերաբերում է դասընթացի ամբողջ նյութին տիրապետելուն: Իրականացնելով ասոցիատիվ-առաջանցիկ կապեր՝ հնարավոր է դառնում մի տեղ գեներացնել բոլոր այն հնարավոր գաղափարները, որոնք իրենց հիմքում ունեն միևնույն մոտեցումները: Այդպիսի գաղափարների ընդհանրացնող և համընդհանուր բնույթը երբեմն ունենում է միջդիսցիպլինար նշանակություն և պիտանի է կրթության բոլոր մակարդակներում: Գիտելիքների այդպիսի իմպլիցիտ տեղափոխումը ուսուցման գործընթացին բերում է մի նոր մակարդակի, որի բնորոշ կողմը մեթոդաբանական ուղղվածության ուժեղացումն է:

Եզրակացություն. Այսպիսով, առաջանցիկ ուսուցման իրականացման մի կարևոր ուղղություն է ասոցիատիվ դատողությունների միջոցով մաթեմատիկական մոդելների միջև անալոգ դրսևորումների հաստատումը: Աշխատանքում կոնկրետ օրինակների վրա ցույց տրվեց, թե ինչպես որոշ մաթեմատիկական պատկերացումներ կարող են առաջանցիկ ուսուցման իրականացման հիմք հանդիսանալ: Մասնավորապես, առանձին ֆիզիկական մեծությունների երկրաչափական մեկնաբանությունների հիմքում ընկած է միևնույն դատողությունների շղթան, մյուս կողմից որոշ ֆիզիկական մեծությունների միջինի որոշման հիմքում ընկած է մեծությունների միջև գոյություն ունեցող ֆունկցիոնալ կապը՝ ուղիղ կամ գծային կախվածությունը: Այդպիսի մոտեցման դեպքում սովորողների մոտ ձևավորվում են ուսուցմանը մեթոդաբանական ուղղվածություն տալու հնարություններ, որոնք կարևոր են մտածողության զարգացման և ձևավորման բարդ գործընթացում:

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-126>

Գրականություն

1. Օատուրյան Ա. Մ., Օատուրյան Ա. Շ., Շահբազյան Ա. Խ., Ֆիզիկայից տեսական նյութի բացատրման ժամանակ սովորողներին խնդիրների լուծման նախապատրաստումը // ՎՊՀ գիտական տեղեկագիր. բնական և ճշգրիտ գիտություններ, 1, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան, Վանաձոր, 2022, էջ 151-162:
2. Օատուրյան Ա. Մ., Շահբազյան Ա. Խ., Ֆիզիկայի ուսուցման ժամանակ առաջանցիկ ուսուցման կազմակերպման դիդակտիկական նպատակահարմարությունը // ՇՊՀ գիտական տեղեկագիր, 2021, պրակ Բ, էջ 258-265:
3. Цатурян А. М. Опережающее обучение как один из принципов реализации обобщающего повторения и непрерывного образования в физике. Сибирский педагогический журнал. Научное периодическое издание. Новосибирск: 2013, №2, с. 167-171.
4. Цатурян А. М., Минасян С. М. Психолого-педагогические аспекты опережающего обучения // Cross-Cultural Studies: Education and Science (CCS&ES). 2021. Volume 6, Issue I, p. 95-102.
5. Цатурян А. М., Минасян С. М. Ассоциативно-опережающие связи и их методологические функции при обучении // Cross-Cultural Studies: Education and Science (CCS&ES). 2019. Volume 4, Issue III, p. 79-84.

6. Цатурян А. М. Дидактический феномен опережающего обучения // II Всемирный конгресс в реальном и виртуальном пространстве «Восток-Запад: пересечения культур». Япония, Киото, Университет Киото Сангё, издательство *Tanaka Print*, 2019. Том I, с. 363-369.
7. Tsaturyan A. M. Advanced Learning as an Implicit Model of Continuous Education // Main Issues of Pedagogy and Psychology, Vol. 1, No. 11, 2024, p. 83-97.

**Применение некоторых математических представлений
при реализации опережающего обучения во время преподавания отдельных тем
раздела «Механика»**

*Цатурян Армен,
Шахбазян Ани*

Резюме

***Ключевые слова:** обучение физике, методологическая направленность преподавания, имплицитный перенос знаний, математическое моделирование, ассоциативно-опережающие связи, способности*

В данной работе, с учётом математической подготовки, характерной для различных возрастных групп, на конкретных примерах показано, как можно реализовать опережающее обучение при изучении отдельных тем из раздела физики «Механика». В частности, представлена роль применения графического метода, используемого при объяснении теоретического материала на разных этапах обучения, в процессе переноса знаний учащихся. Кроме того, в качестве средства реализации опережающего обучения рассмотрено применение универсального подхода при определении среднего значения физической величины в формулах, выражающих линейную зависимость, то есть в процессе математического моделирования. Актуальность работы заключается в том, что в ней показано, как математические представления могут быть использованы как средство реализации опережающего обучения. С этой целью на конкретных примерах показано, как при преподавании отдельных тем из механики можно осуществлять опережающее обучение на основе применения математических моделей. Последовательное использование ассоциативно-опережающих связей в процессе опережающего обучения повышает его эффективность. В отличие от межпредметных и внутрипредметных связей, при которых перенос знаний осуществляется из прошлого опыта в текущий процесс обучения и носит эксплицитный (явный) характер, в случае опережающего обучения перенос знаний происходит из текущего процесса обучения в будущую учебную деятельность и имеет имплицитный (неявный) характер.

The Application of Certain Mathematical Concepts in Advanced Learning when Teaching Individual Topics in “Mechanics”

*Tsaturyan Armen,
Shahbazyan Ani*

Summary

Key words: *teaching Physics, methodological direction of teaching, implicit transfer of knowledge, mathematical modeling, associative-progressive connections, abilities*

Taking into account the mathematical training characteristic of different age groups, specific examples in the article show how advanced learning can be implemented when studying individual topics from the section of physics "Mechanics". In particular, the role of the application of the graphical method, used in explaining theoretical material at different stages of training, in the process of transferring students' knowledge is presented. In addition, the application of a universal approach in determining the average value of a physical quantity in formulas expressing a linear relationship, that is, in the process of mathematical modeling, is considered as a means of implementing advanced learning. The relevance of the work lies in the fact that it shows how mathematical representations can be used as a means of implementing advanced learning. To this end, specific examples show how, when teaching individual topics from mechanics, advanced learning can be carried out based on the use of mathematical models. The consistent use of associative-progressive connections in the process of advanced learning increases its effectiveness. Unlike interdisciplinary and intradisciplinary connections, in which knowledge transfer occurs from prior experience to the current learning process and is explicit in nature, anticipatory learning involves the transfer of knowledge from the current learning process to future learning activities and is characterized by an implicit nature.

Ներկայացվել է 14. 11. 2025 թ.

Գրախոսվել է 19. 03. 2026 թ.

Ընդունվել է տպագրության 27. 05. 2026 թ.

**Սովորողների մոտ գրաֆիկական պատկերացումների զարգացումը
հիմնական դպրոցի ֆիզիկայի դասընթացում**

*Օստուրյան Արմեն,
Պապյան Անի*

DOI: <https://doi.org/10.58726/27382923-2026.1ns-134>

Հանգուցային բառեր. տարիքահոգեբանական առանձնահատկություններ, վերացական մտածողություն, միջառարկայական կապեր, ֆունկցիոնալ կապեր, վերլուծական մտածողություն, ֆիզիկական երևույթներ և պրոցեսներ

